

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բովանդակություն

<u>Ներածական մաս</u>	3 էջ
<u>Ամփոփագիր</u>	4-6 էջեր
<u>Անկախ հաշվերենության կարծիք</u>	7-8 էջեր
<u>Անհամապատասխանությունների և խեղաթյուրումների կամ դրանց բացակայության վերաբերյալ գրառումներ</u>	9-48 էջեր
<u>Առաջարկություններ</u>	48-49 էջեր

Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի գործունեության ծրագրի 2-րդ մասի 7-րդ կետ, 2021 թվականի մայիսի 11-ի թիվ 145-Ա և 2021 թվականի հունիսի 30-ի թիվ 180-Ա որոշումներ:

Հաշվեքննության օբյեկտը

Երևանի քաղաքապետարան:

Հաշվեքննության առարկան

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական գործունեություն:

Հաշվեքննության առարկայի չափանիշները

«Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 24.12.2003թ. թիվ 1937-Ն որոշում, գնման պայմանագրեր:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հաշվեքննության կատարման ժամկետը

Նախատեսված էր 2021 թվականի մայիսի 31-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը: Հաշվեքննության կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 2022 թվականի փետրվարի 28-ը ներառյալ:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների մեթոդաբանությունների, «ՀՀ հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացության նախագծի և դրան կից ներկայացվող փաստաթղթերի ուղեցույցի» համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:

Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի իններորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգել է Հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը մինչև 2021 թվականի նոյեմբերի 19-ը, դրանից հետո՝ Հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագույանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ստուգմամբ պարզվել է, որ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ (այսուհետ՝ Մետրոպոլիտեն) տարածքի 26 վարձակալներ վարձակալության պայմանագրերի շրջանակում ունեցել են վարձավճարի 4,412.3 հազ. դրամ պարտքեր: Մետրոպոլիտենը վարձավճարի ուշացման դեպքերի համար տույժեր չի հաշվարկել և չի գանձել, որի հետևանքով 2020 թվականի տարեվերջին տարածքի վարձակալության պայմանագրերով Մետրոպոլիտենի դեբիտորական պարտքը տարեսկզբի նկատմամբ աճել է 2.5 անգամ:

2019 թվականի տարեվերջին գովազդի տեղադրման թույլտվության համար կնքված պայմանագրերով 17 կազմակերպություններ ունեցել են պարտքեր, որը կազմել է գումարային 9,962.8 հազ. դրամ: 2020 թվականի տարեվերջին 11 կազմակերպություններ ունեցել են պարտքեր, որը գումարային կազմել է 7,306.7 հազ. դրամ: Գովազդի թույլտվությունների համար վարձավճարները ուշացնելու յուրաքանչյուր օրվա համար պայմանագրերով սահմանված է տույժ, ամսական վճարի 0.15 տոկոսի չափով: Սակայն, 2019 և 2020 թվականներին վճարումների ուշացումների համար Մետրոպոլիտենը ոչ մի դեպքով չի հաշվարկել և չի գանձել պայմանագրերով սահմանված ուշացված օրերի տույժերը: Բացի այդ, ի տարբերություն տարածքների վարձակալության գործընթացի, որը կանոնակարգվում է Մետրոպոլիտենի կողմից հաստատված գնացուցակով, գովազդի տեղադրման թույլտվության տրամադրման համար վարձավճարի չափերը իրավական ակտով կանոնակարգված չէ:

Մետրոպոլիտենի թունելների մալուխային մայրուղիներում մալուխների և համապատասխան սարքավորումների տեղադրման թույլտվությունների համար միավորի սակագներ սահմանված չեն: Արդյունքում, մեկ գծամետր նույն տեսակի օպտիկամանրաթելային մալուխի տեղադրման համար պայմանագրերով սահմանվել են տարբեր գներ՝ «ՋիէնՍի-Ալֆա» ՓԲԸ՝ 40.8 դրամ, «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ՝ 36 դրամ և «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ՝ 72 դրամ: Բացի այդ, «Ղ Տելեկոմ» ՓԲԸ և «Յուքոմ» ՓԲԸ պայմանագրերով սահմանված չեն մալուխների, ինչպես նաև համապատասխան սարքավորումների տեղակայման տեսակը, քանակը և վայրը, որոնք հիմք են հանդիսանում պայմանագրի գնի հաշվարկման համար:

2019 և 2020 թվականներին Մետրոպոլիտենի կողմից քաղաքացիաիրավական հիմքով կնքված պայմանագրերով վարձատրությունը կազմել է համապատասխանաբար՝ 50,860.0 հազ. դրամ և 15,057.7 հազ. դրամ: Ստուգվել է Մետրոպոլիտենի և աշխատանքային խմբի (20 հաստիքային աշխատողներ) միջև կնքված վագոնների վերանորոգման ծառայությունների մատուցման պայմանագիրը՝ 10,000.0 հազ. դրամ արժեքով: Մետրոպոլիտենը, որպես պատվիրատու ծառայությունների ձեռքբերումը իրականացրել է առանց գնման գործընթացի: Մետրոպոլիտենի կողմից հաստատվել է գնահաշվարկ մեկ շարժակազմի վերանորոգման համար: Գնահաշվարկով աշխատանքների

կատարման աշխատատարությունը կազմում է 15496.4 մարդ/ժամ, կամ մեկ աշխատակցի համար՝ 774.8 ժամ: Պայմանագրով նախատեսվել է աշխատանքը կատարել 2019 թվականի հունվարի 26-ից մինչև մայիսի 23-ը, որը կազմում է 79 աշխատանքային օր, կամ ըստ գնահաշվարկի, այդ աշխատողները պայմանագրային պարտավորությունները կատարելու համար աշխատել են օրական 9.8 ժամ: Փաստորեն, հաստիքով նախատեսված իրենց պարտականությունները կատարելու համար այդ աշխատողները աշխատաժամանակ չեն ունեցել, սակայն, այդ ժամանակահատվածում այդ աշխատողներին, որպես հաստիքային աշխատավարձ հաշվարկվել և վճարվել է ևս 9,049.0 հազ. դրամ:

Աշխատողների աշխատավարձերի հաշվարկման և վճարման ճշտության ստուգման շրջանակում Մետրոպոլիտենի աշխատողների ՀՀ սահմանահատումների վերաբերյալ արտաքին հաստատում ստանալու նպատակով ՀՀ հաշվեքննիչ պալատը դիմել է ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը: Ստացված տեղեկատվությունը համադրելով է Մետրոպոլիտենի աշխատողներին աշխատավարձի վճարման տեղեկագրերի և բանկային քաղվածքների հետ պարզվել է, որ առանձին աշխատողներ 2019 և 2020 թվականների ընթացքում բացակայել են հանրապետությունից, սակայն այդ ժամանակահատվածում այդ աշխատողներին հաշվարկվել և վճարվել է աշխատավարձ:

Ստուգմամբ պարզվել է, որ ապրանքների գնման համար Մետրոպոլիտենի կողմից «Վարբադ» ՍՊԸ և «Ռեֆորս Գրուպ» ՍՊԸ հետ կնքված պայմանագրերով ապրանքները մատակարարվել են գնման ժամանակացույցի ուշացումներով, որի համար Մետրոպոլիտենը չի հաշվարկել և չի գանձել ուշացված օրերի տույժեր:

Մետրոպոլիտենի կողմից վագոնների պահեստամասերի գնման համար «Ալերտո» ՍՊԸ, «Նովա Թրեյդ» ՍՊԸ, «ՏՆՄ» ՍՊԸ և «Վարբադ» ՍՊԸ հետ կնքված պայմանագրերի տեխնիկական բնութագրերով սահմանվել է, որ պարտադիր պայման է հանդիսանում ապրանքի որակի սերտիֆիկատի առկայությունը: Ստուգմամբ պարզվել է, որ ապրանքները մատակարարվել են առանց որակի սերտիֆիկատների:

2019 թվականի հունվարի 15-ին Երևանի քաղաքապետարանի և Մետրոպոլիտենի միջև կնքվել է սուբսիդիայի հատկացման պայմանագիր՝ 2,732,776.8 հազ. դրամի: Հատկացված գումարից 1,933,279.6 հազ. դրամը ուղղվել է Մետրոպոլիտենի գործառնական գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի ծածկմանը, իսկ 799,497.2 հազ. դրամը՝ վարկերի գծով առաջացած պարտավորությունների իրականացմանը: 2020 թվականին սուբսիդիայի հատկացման պայմանագրով Մետրոպոլիտենին տրամադրված է 2,801,071.0 հազ. դրամից 2,001,691.6 հազ. դրամը ուղղվել է ֆինանսական ճեղքվածքի ծածկման նպատակով, 799,379.4 հազ. դրամը՝ վարկերի գծով առաջացած պարտավորությունների իրականացման համար:

ՀՀ կառավարության 24.12.2003թ. թիվ 1937-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը: Ստուգմամբ պարզվել է,

որ Երևանի քաղաքապետարանի և Մետրոպոլիտենի միջև 2019 և 2020 թվականներին սուբսիդիայի հատկացման պայմանագրերը կնքվել են Կարգի պահանջներին անհամապատասխան՝ չի նշվել մատուցվող ծառայության մեկ միավորի սահմանված գինը, մատուցման ենթակա ծառայությունների առավելագույն քանակը և դրա փոփոխման պայմանները, մատուցվող ծառայության նվազագույն շահավետ գինը: Ստուգմամբ պարզվել է նաև, որ հատկացված սուբսիդիաների գծով Մետրոպոլիտենը պայմանագրով նախատեսված առանձնացված հաշվառում չի իրականացրել և տրամադրված գումարների օգտագործման վերաբերյալ հաշվետվություններ չի ներկայացրել: Փաստացի, 2019 թվականին Մետրոպոլիտենի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով առաջացել է շահույթ, որի դիմաց Մետրոպոլիտենը վճարել 102,327.1 հազ. դրամ շահութահարկ, իսկ բանկային հաշիվներում Մետրոպոլիտենի դրամական միջոցների մնացորդները տարեվերջին գումարային կազմել են 474,812.3 հազ. դրամ: 2020 թվականի տարեվերջին Մետրոպոլիտենի դրամական միջոցների մնացորդը բանկային հաշիվներում կազմել է 83,561.9 հազ. դրամ:

Փաստորեն, պետական բյուջեից Մետրոպոլիտենին որպես սուբսիդիա գումար հատկացնելը պայմանավորված չէ Մետրոպոլիտենի գործունեության ֆինանսական ցուցանիշներով, չունի հաշվարկային հիմնավորում և չի համապատասխանում Կարգով սահմանված սուբսիդիայի հատկացման նպատակին, այն է՝ պետության հանձնարարությամբ և որոշված գնով կազմակերպության կողմից որպես նվազագույն շահավետ գնից ցածր գնով ծառայության մատուցման արդյունքում այդ կազմակերպության կրած վնասի կամ դրա մի մասի փոխհատուցում:

I. ԱՆԿԱԽ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 9-րդ վարչությունը, հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի և 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները, ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն է իրականացրել Երևանի քաղաքապետարանի «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 2019 և 2020 թվականների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ:

Ղեկավարության պատասխանատվությունը

ՀՀ ոստիկանության ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ բյուջետային դասակարգումների և դրանց կիրառման ցուցումների համաձայն, ինչպես նաև ֆինանսատնտեսական գործունեությունը իրավական ակտերին, քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխան իրականացնելու համար: ՀՀ ոստիկանության ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը իր կարծիքով, թույլ է տալիս պատրաստել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Հաշվեքննողների պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Հաշվեքննությունն անցկացվում է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ առաջնորդվելով Առևտրի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության ստանդարտներով: Հաշվեքննության ընթացքում անհրաժեշտ է հետևել վարքագծի սկզբունքների պահանջներին, և հաշվեքննությունը պլանավորել ու իրականացնել այնպես, որպեսզի ձեռք բերվի ողջամիտ երաշխիք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից և անհամապատասխանություններից զերծ լինելու վերաբերյալ:

Հաշվեքննության ընթացքում կատարվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության վերաբերյալ հաշվեքննության ապացույցի ձեռքբերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ խարդախության կամ սխալի կամ անհամապատասխանության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման և ֆինանսատնտեսական գործունեության մեջ էական անհամապատասխանությունների ռիսկերի գնահատումը:

Եզրահանգում

Հաշվեքննության ընթացքում ձեռք են բերվել և արձանագրվել են բավարար ապացույցներ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ

մասի 1-ին կետի բ. ենթակետի դրույթին համապատասխան ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքը հիմնավորելու համար:

ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքով Երևանի քաղաքապետարանի «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ 2019 և 2020 թվականների հաշվետվությունները արժանահավատ են, էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել և հաշվեքննության ու ստուգման ֆինանսական տեսակի առումով տրվում է դրական եզրահանգում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքով 2019 և 2020 թվականների ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում Երևանի քաղաքապետարանի «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ թույլ է տվել էական անհամապատասխանություններ, դրանց հետևանքները համատարած չեն և հաշվեքննության համապատասխանության տեսակի առումով տրվում է ոչ լիարժեք եզրահանգում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ՝

Աբրամ Բախչագույան

-- ----- 2022 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,

Բաղրամյան փող. 19, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Մետրոպոլիտենի եկամուտներ

Երևանի քաղաքապետը 21.06.2011թ. թիվ 2637-Ա որոշումով, հաշվի առնելով Մետրոպոլիտենի առաջարկությունը և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված համաձայնությունը, Երևանի Մետրոպոլիտենով մեկ ուղևորի փոխադրման սակագինը 2011 թվականի հուլիսի 1-ից սահմանել է 100 դրամ:

Մետրոպոլիտենի եկամուտները ուղևորափոխադրումներից 2019 և 2020 թվականներին կազմել են համապատասխանաբար՝ 1,886,840.5 հազ. դրամ և 1,010,130.7 հազ. դրամ: 2020 թվականին ուղևորափոխադրումներից եկամուտների նվազումը պայմանավորված է նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման պատճառով ՀՀ կառավարության 06.03.2020թ. թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությունով և արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող պարետատան պարետի 31.03.2020թ. թիվ 27 որոշմամբ՝ Մետրոպոլիտենի գործունեությունը 2020 թվականի ապրիլի 1-ից մինչև մայիսի 17-ը ներառյալ դադարեցումով:

Մետրոպոլիտենում ներդրված անկոնտակտ վճարումների համակարգը ու տվյալների փոխանցման ցանցը չի գործում և ուղևորափոխադրումների առևտրաֆինանսական հաշվառումը իրականացվում է Մետրոպոլիտենի տնօրենի կողմից 10.10.2010թ. հաստատված՝ Երևանի մետրոպոլիտենով փոխադրումների առևտրաֆինանսական գործունեության հրահանգի հիման վրա: Հրահանգով կանոնակարգվել է Մետրոպոլիտենի կայարաններում ժետոնների և էլեկտրոնային քարտերի վաճառքը, կանխիկ դրամի պահպանումը ու հաշվառումը, ամենօրյա հասույթի հանձնումը Մետրոպոլիտենի կենտրոնական դրամարկղ, հաշվետվությունների կազմումը և առևտրաֆինանսական գործունեությանը վերաբերվող այլ գործառույթներ: Ընտրանքային կարգով ուսումնասիրվել են «Բարեկամություն» կայարանում ժետոնների վաճառքի, հաշվառման, կանխիկ

դրամի հաշվառման, պահպանման և դրամարկղ մուտքագրման գործառույթները: Պարզվել է, որ նշված գործառույթները կազմակերպված են և իրականացվում են հրահանգի պահանջներին համապատասխան:

2019 և 2020 թվականներին տարածքի վարձակալության պայմանագրերով Մետրոպոլիտենի եկամուտները կազմել են համապատասխանաբար՝ 89,444.4 հազ. դրամ և 84,459.9 հազ. դրամ: Ստուգմամբ պարզվել է, որ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 26 վարձակալներ տարածքի վարձակալության պայմանագրերի շրջանակում ունեցել են վարձավճարի 4,412.3 հազ. դրամ պարտքեր, որից «Ապսիդա» ՍՊԸ պարտքը՝ 1,298.6 հազ. դրամ, «Արարատբանկ» ԲԲԸ պարտքը՝ 692.0 հազ. դրամ: 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 58 վարձակալներ տարածքի վարձակալության պայմանագրերի շրջանակում ունեցել են 10,935.2 հազ. դրամ պարտքեր, որից «Ապսիդա» ՍՊԸ պարտքը՝ 3,698.0 հազ. դրամ, «Օնլայն Շոփինգ Նեթվորք» ՍՊԸ պարտքը՝ 1,011.8 հազ. դրամ, «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ պարտքը՝ 581.8 հազ. դրամ և «Սիթիինֆո» ՍՊԸ պարտքը՝ 533.5 հազ. դրամ:

Տարածքի վարձակալության համար կնքված պայմանագրերով սահմանվել է, որ նախատեսված վարձակալության վճարները ուշացնելու համար կետանցի յուրաքանչյուր օրվա համար վարձակալը վճարում է տույժ՝ վարձավճարի 0.15 տոկոսի չափով: Սակայն, Մետրոպոլիտենը վարձավճարի ուշացման դեպքերի համար չի հաշվարկել և վարձակալներից չի գանձել պայմանագրերով սահմանված տույժերը: Բացառություն է կազմել «Ապսիդա» ՍՊԸ, որի նկատմամբ դատարան ներկայացված հայցի համաձայն՝ հաշվարկվել է 932.9 հազ. դրամ տույժ: Վարձավճարների ուշացման համար տույժեր չկիրառելու հետևանքով 2020 թվականի տարեվերջին տարածքի վարձակալության պայմանագրերով Մետրոպոլիտենի դեբիտորական պարտքը տարեսկզբի նկատմամբ աճել է 2.5 անգամ:

Մետրոպոլիտենի բացառություն

Արձանագրության «Մեղրոպոլիսի եկամուրներ» բաժնի՝ Տարածքի վարձակալության համար սահմանված վարձակալության վճարների ուշացման կերպանցի 0,15 տոկոսի չափով տույժի կիրառումը, համաձայն «ՄՊԲ» պետ Վ. Սարգսյանի բացատրության, պայմանավորված է երկրում ստեղծված համաճարակային ու պատերազմական իրավիճակներով, ինչպես նաև գործընկերների երկարամյա հարաբերությունները ընկերության հետ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 610-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման»: Սակայն, ստուգմամբ պարզվել է, որ խախտելով օրենսդրության այդ պահանջը, տարածքի վարձակալության համար Ա/Ձ Արմեն Մանուկյանի հետ կնքված 23.08.2019թ. թիվ 20-ՄՊԲ/19 և 16.01.2020թ. թիվ 01-ՄՊԲ/20 պայմանագրերը նոտարական վավերացում չեն ստացել:

Մեղրոպոլիսի բացատրություն

Միաժամանակ հայտնում ենք նաև, որ այն կազմակերպությունները որոնց հետ չունենք նոտարական վավերացմամբ պայմանագրեր, հիմք ընդունելով, որ տվյալ մասով ֆինանսական պարտավորություններ չկան, ընդունելով ի գիտություն Արձանագրությունը, Ընկերությունը կկատարի նոտարական վավերացումները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 611-րդ հոդվածի համաձայն՝ «Անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման»: Ստուգմամբ պարզվել է, որ տարածքի վարձակալության առանձին պայմանագրեր կնքված են օրենսդրության այդ պահանջի խախտումով: Մասնավորապես, պետական գրանցում չեն ստացել «Ապսիդա» ՍՊԸ հետ կնքված 14.12.2012թ. թիվ 56-ՊԲ/12, «Զառա» ՍՊԸ հետ կնքված 26.03.2013թ. թիվ 13-ՊԲ/13, «Մոկիտա» ՍՊԸ հետ կնքված 30.07.2018թ. թիվ 08-ՄՊԲ/18, Ա/Ձ Ռուզաննա Զոհրաբյանի հետ կնքված 30.05.2013թ. թիվ 24-ՊԲ/13 և ֆիզիկական անձանց հետ կնքված 21.06.2016թ. (առանց համարի) ու 20.09.12թ. թիվ 77-ՊԲ/12 պայմանագրերը:

Մեղրոպոլիսի առարկություն

Արձանագրության «Մետրոպոլիտենի եկամուտներ» բաժնում արձանագրվել է, որ ներքոնշյալ ընկերությունները չունեն պետական գրանցում, սակայն համաձայն «ՄՊԲ» պետ Վ. Սարգսյանի բացատրության, «Ապսիդա» ՍՊԸ-ի, «Զարա» ՍՊԸ-ի, «Մոկիտա» ՍՊԸ-ի, Ա/Ձ Ռուզաննա Զոհրաբյանի 30.05.2013թ.-ի կնքված 24-ՊԲ/13, ՀՀ քաղաքացի Կարո Յարդումյանի 20.09.12թ.-ի թիվ 77-ՊԲ/12 պայմանագրերը ունեն պետական գրանցում (փաստաթղթերը և հիմքերը կցվում են):

Հաշվեքննողի առձագանք

հիմքերը ներկայացվել են արձանագրությանը ծանոթանալուց հետո

Մետրոպոլիտենի տնօրենների խորհուրդը 01.11.2011թ. թիվ 4 որոշմամբ հաստատել է մետրոպոլիտենի կայարաններում և հարակից տարածքներում գործունեություն ծավալելու թույլտվության ամսական նվազագույն գների գնացուցակը (հավելված 1): Մետրոպոլիտենի տարածքների վարձակալության համար կնքված պայմանագրերով սահմանված վարձավճարները հիմնականում համապատասխանում են գնացուցակով հաստատված գներին: Միաժամանակ, ստուգմամբ պարզվել է, որ 16.01.2020թ. թիվ 01-ՄՊԲ/20 պայմանագրով «Շենգավիթ» կայարանի մուտքին հարակից տարածքում վարձակալության է տրամադրվել 9.8 քմ մակերեսով տարածք՝ ամսական 19.6 հազ. դրամ վարձավճարով, կամ 1 քմ՝ 2000 դրամ: Ըստ հաստատված գնացուցակի, «Շենգավիթ» կայարանի մուտքին հարակից ոչ կահավորված տարածքների 1 քմ համար սահմանված է ամսական նվազագույն գին՝ 3500 դրամ: Փաստորեն, այդ տարածքի 1 քմ վարձակալության է տրամադրվել գնացուցակով հաստատված նվազագույն գնից 1500 դրամ պակաս, որը տարվա կտրվածքով կազմում է 176.4 հազ. դրամ: Բացի այդ, «Շենգավիթ» կայարանում 23.08.2019թ. թիվ 20-ՄՊԲ/19 պայմանագրով վարձակալության է տրամադրվել 700 քմ մակերեսով տարածք՝ 1 քմ ամսական 68.6 դրամով, որը տարվա կտրվածքով կազմում է 576.2 հազ. դրամ: Տարածքը վարձակալության է տրամադրվել որպես ավտոկայանատեղի, որի

համար Մետրոպոլիտենի խորհրդի կողմից հաստատված գնացուցակում գին սահմանված չէ:

Մետրոպոլիտենի տարածքում տարբեր կազմակերպություններ պայմանագրային հիմունքներով իրականացնում են գովազդային գործունեություն: Գովազդի տեղադրման թույլտվության համար կնքված պայմանագրերի շրջանակում Մետրոպոլիտենի եկամուտները 2019 թվականին կազմել են 115,110.8 հազ. դրամ, 2020 թվականին՝ 61,940.5 հազ. դրամ:

2019 թվականի տարեվերջին գովազդի տեղադրման թույլտվության համար կնքված պայմանագրերով 17 կազմակերպություններ ունեցել են պարտքեր, և Մետրոպոլիտենի դեբիտորական պարտքը կազմել է գումարային 9,962.8 հազ. դրամ: 2020 թվականի տարեվերջին 11 կազմակերպություններ ունեցել են պարտքեր, և Մետրոպոլիտենի դեբիտորական պարտքը գումարային կազմել է 7,306.7 հազ. դրամ: Ստուգմամբ պարզվել է, որ գովազդային գործունեություն իրականացնող «Վաս Մեդիա» ՍՊԸ կողմից 2019 թվականին կնքված 15.01.2019թ. թիվ ՄՊԲ-01/զ-19 պայմանագրով ենթակա էր վճարման 28,751.2 հազ. դրամ, փաստացի վճարվել է 25,787.6 հազ. դրամ: 2020 թվականին ընկերության կողմից ենթակա էր վճարման 24,549.8 հազ. դրամ, փաստացի վճարվել է 23,813.4 հազ. դրամ: Հաշվի առնելով նաև նախորդ տարվանից փոխանցված պարտքը, 2020 թվականի տարեվերջին ընկերության պարտքը կազմել է 3,700.0 հազ. դրամ:

«Յուքոմ» ՍՊԸ կողմից 2019 թվականին կնքված 01.12.2018թ. թիվ ՄՊԲ-34/զ-18 պայմանագրով ենթակա էր վճարման 23,040.0 հազ. դրամ, փաստացի վճարվել է 21,120.0 հազ. դրամ: Հաշվի առնելով նախորդ տարվանից փոխանցված պարտքը, 2019 թվականի տարեվերջին ընկերության պարտքը կազմել է 3,840.0 հազ. դրամ: 2020 թվականին ընկերության կողմից ենթակա էր վճարման 14,787.1 հազ. դրամ, փաստացի վճարվել է 17,427.1 հազ. դրամ: 2020 թվականի տարեվերջին ընկերության պարտքը կազմել է 1,200.0 հազ. դրամ:

Վարձավճարները ուշացնելու համար կետանցի յուրաքանչյուր օրվա համար պայմանագրերով սահմանված է տույժ, ամսական վճարի 0.15 տոկոսի չափով:

Սակայն, 2019 և 2020 թվականներին գովազդի տեղադրման թույլտվության համար կնքված պայմանագրերով վճարումների ուշացումների համար Մետրոպոլիտենը ոչ մի դեպքով չի հաշվարկել և չի գանձել պայմանագրերով սահմանված ուշացված օրերի տույժ:

Բացի այդ, ի տարբերություն տարածքները վարձակալության տրամադրելու գործընթացի, որը կանոնակարգվում է Մետրոպոլիտենի տնօրենների խորհրդի կողմից հաստատված գնացուցակով, գովազդի տեղադրման թույլտվության տրամադրման համար վարձավճարի չափերը իրավական ակտով կանոնակարգված չէ:

Մետրոպոլիտենի թունելների մալուխային մայրուղիներում մալուխների և համապատասխան սարքավորումների տեղադրման թույլտվությունների համար 2019 թվականին գործող թվով 8 պայմանագրերով վճարման ենթակա տարեկան գումարը կազմել է 131,743.0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 130,975.0 հազ. դրամ: 2020 թվականին գործող 9 պայմանագրերով վճարման ենթակա տարեկան գումարը կազմել է 136,415.2 հազ. դրամ, փաստացի մուտքը՝ 136,918.8 հազ. դրամ: Ստուգմամբ պարզվել է, որ «Յուքոմ» ՓԲԸ հետ կնքված 01.11.2016թ. թիվ ՄԿ-3/Կ-2016 պայմանագրով 2019 թվականի համար վճարման ենթակա գումարը կազմել է 14,400.0 հազ. դրամ, փաստացի վճարվել է 13,200.0 հազ. դրամ: Հաշվի առնելով նախորդ տարվանից փոխանցված պարտքը, 2019 թվականի տարեվերջին ընկերության պարտքը կազմել է 2,400.0 հազ. դրամ: Նույն պայմանագրի շրջանակում 2020 թվականի համար վճարման ենթակա գումարը կազմել է 20,800.0 հազ. դրամ, փաստացի վճարվել է 17,440.0 հազ. դրամ, և հաշվի առնելով նախորդ տարիներից փոխանցված պարտքը՝ 2020 թվականի տարեվերջին ընկերության պարտքը կազմել է 5,760.0 հազ. դրամ: Մետրոպոլիտենի և «Յուքոմ» ՓԲԸ միջև կնքված պայմանագրի 4.1 կետով սահմանվել է, որ «Պայմանագրով նախատեսված վճարները ուշացնելու համար ընկերությունը Մետրոպոլիտենին, վերջինիս հայեցողությամբ, կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.1 տոկոսի

չափով»: Ընկերության կողմից վճարները ուշացնելու համար Մետրոպոլիտենը իր հայեցողությամբ ոչ մի դեպքով չի հաշվարկել և չի գանձել տույժ:

Մետրոպոլիտենի թունելներում մալուխների և համապատասխան սարքավորումների տեղադրման թույլտվությունների համար միավորի սակագներ սահմանված չեն: Արդյունքում, մեկ գծամետր նույն տեսակի օպտիկամանրաթելային մալուխի տեղադրման համար պայմանագրերով սահմանվել են տարբեր գներ՝ «ԶիէնՍի-Ալֆա» ՓԲԸ 01.03.2011թ. թիվ ՄԿ-115/Կ-2011 պայմանագրի շրջանակում անսական վճարում է 40.8 դրամ, «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ 01.01.2020թ. թիվ ՄԿ-1/Կ-2020 պայմանագրի շրջանակում՝ 36 դրամ և «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ 01.11.2012թ. թիվ ՄԿ-1/Կ-2013 պայմանագրի շրջանակում՝ 72 դրամ: Բացի այդ, ի տարբերություն մալուխների տեղադրման մնացած պայմանագրերի, «Ղ Տելեկոմ» ՓԲԸ 01.01.2016թ. թիվ ՄԿ-7/Կ-2015 և Յուքոմ ՓԲԸ 01.11.2016թ. թիվ ՄԿ-3/Կ-2016 ու 01.09.2020թ. թիվ ՄԿ-1/Կ-2020 պայմանագրերով սահմանված չեն մալուխների, ինչպես նաև համապատասխան այլ սարքավորումների տեղակայման տեսակը, քանակը և վայրը, որոնք հիմք են հանդիսանում պայմանագրի գնի հաշվարկման համար:

Մետրոպոլիտենի բացառություն

Արձանագրության «Մետրոպոլիտենի եկամուտներ» բաժնի՝ թունելներում մալուխների և համապատասխան սարքավորումների թույլտվության մասով հայտնում ենք, որ համաձայն «Կ» մասնաճյուղի պետ՝ Ա. Յայլոյանի բացառության, մասնաճյուղը այլ ձեռնարկությունների կողմից մետրոպոլիտենի տարածքում մալուխների տեղադրման թույլտվության գործունեության հետ կապված կատարում է մալուխների հետ տարվող ընթացիկ շահագործման, վերանորոգման, անսարքությունների վերացման աշխատանքների կատարման ժամանակ տեխ. հսկողության ապահովում: Նշեն, որ «ՄՏՍ Հայաստան», «Յուքոմ», «Տելեկոմ Արմենիա» ընկերությունները մետրոպոլիտենի տարածքում տրամադրում են GSM ծառայություններ, որոնց գնագոյացումը չի կարելի դիտարկել մալուխների, ալեհավաքների կամ այլ սարքավորումների միավորների քանակով, քանզի

տեխնոլոգիաների առաջխաղացման արդյունքում տվյալ սարքավորումները ժամանակի ընթացքում ենթարկվում են քանակային նվազման և փոփոխության:

Ուստի GSM տրամադրող ընկերությունների հետ գնագոյացումը կապված է եղել տվյալ ժամանակահատվածում նման սարքավորումների տեղադրման շուկայական արժեքով և քանակությունների ընթացքով: Քանզի տվյալ ընկերությունները հանդիսանում են ոչ թե տարածքի վարձակալ, այլ մետրոպոլիտենի տարածքում GSM ծառայություն մատուցող ընկերություններ իսկ գնահատված արժեքումը կհանգեցնի մեր ընկերության ֆինանսական մուտքերի նվազեցմանը: Տույժերի և տուգանքների մասով կարծում եմ, որ դա ֆինանսական հաշվարկի խնդիր է և մասնաճյուղը որևէ գործառույթ չունի կատարելու այդպեղ: Մի դիտարկում ևս նշեմ, որ բոլոր օպերմանրաթելային մալուխները տարբեր կտրվածքների են և նույնը համարելը շատ վերացական հասկացողություն է և անթույլատրելի:

Մետրոպոլիտենը, որպես պատվիրատուների էլեկտրասնուցումը ապահովող էլեկտրահաղորդագծերի սպասարկող, կնքել է տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրեր: Կնքված պայմանագրերով մատուցվող ծառայությունների արժեքը կազմում է պատվիրատուի կողմից օգտագործված էլեկտրաէներգիայի արժեքի 10%-ը: Պայմանագրով վճարման ենթակա գումարի չափը որոշվում է Մետրոպոլիտենի և պատվիրատուի միջև հաշվիչի ամենամսյա ցուցմունքի հիման վրա հաստատված երկկողմ ակտերով: 2019 և 2020 թվականներին գործել են թվով 49 պայմանագրեր, որոնց շրջանակում Մետրոպոլիտենի մուտքերը կազմել են համապատասխանաբար՝ 8,689.2 հազ. դրամ և 6,360.0 հազ. դրամ: Պայմանագրերով սահմանված վճարումները չկատարելու դեպքում, ՀՀ հանրային ծառահությունները կարգավորող հանձնաժողովի 27.12.2006թ. թիվ 358-ն որոշման համաձայն՝ Մետրոպոլիտենին իրավունք է վերապահվում դադարեցնել պատվիրատուի էլեկտրաէներգիայի սնուցումը: Ստուգմամբ պարզվել է, որ 2019 և 2020 թվականներին սպառողներից չորսը՝ «Երևանյան երեկոներ» ՍՊԸ, «Մոսկվա կինոթատրոն» ՍՊԸ, «Նարեկ» ՍՊԸ

և մեկ ֆիզիկական անձ չեն կատարել երկկողմ ակտերով հաստատված վճարումները ամբողջությամբ, սակայն Մետրոպոլիտենը չի դադարացրել դրանց էլեկտրաէներգիայի սնուցումը:

Մետրոպոլիտենի առարկություն

Արձանագրության «Մետրոպոլիտենի եկամուտներ» բաժնի՝ էլեկտրասնուցումը ապահովող էլեկտրահաղորդագծերի սպասարկման մասով հայտնում ենք, որ համաձայն «Է» մասնաճյուղի պետ՝ Լ. Մակարյանի բացատրության, «Նարեկ» ՍՊ ընկերությունը 31.12.2019թ.-ի դրությամբ, ըստ 10.01.2020թ.-ի ակտի ունեցել է սպասարկման վճարման ենթակա գումար 294200 դր, որը ըստ իր հետ կնքած հ.ՄԿ-10/Է-2006թ., 27.03.2006թ. տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման պայմանագրի 3.2 կետի պետք է վճարեր ակտը ներկայացնելուց հետո 10 –օրյա ժամկետում, ինչը և կատարվել է: Նույն ընկերությունը 31.12.2020թ.-ի դրությամբ, ըստ 12.01.2021թ.-ի ակտի ունեցել է սպասարկման վճարման ենթակա գումար 251380 դր, որը նույնպես վճարվել է ժամանակին: Տվյալ ենթաբաժանորդը հանդիսանում է բարեխիղճ վճարող և սպասարկման վճարման պարտքեր չի կուտակում:

Հաշվեքննողի առաջադանք

«Նարեկ» ՍՊԸ մասով առարկությունը ընդունվել է

Մետրոպոլիտենի բացատրություն

Արձանագրության «Մետրոպոլիտենի եկամուտներ» բաժնի՝ էլեկտրասնուցումը ապահովող էլեկտրահաղորդագծերի սպասարկման մասով հայտնում ենք, որ համաձայն «Է» մասնաճյուղի պետ՝ Լ. Մակարյանի բացատրության, «Երևանյան երեկոներ» ՍՊ ընկերությունը 31.12.2019թ.-ի դրությամբ, ունեցել է սպասարկման վճարման ենթակա գումար ըստ 04.12.19թ. ակտի 15940 դր. և 10.01.2020թ.-ի ակտի 17060 դր, որը իր հետ կնքած հ.ՄԿ-20/Է-2010թ., 09.04.2010թ. տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման պայմանագրի 3.2 կետի պետք է վճարեր ակտը ներկայացնելուց հետո 10 –օրյա ժամկետում, սակայն 21.01.2020թ.-ին վճարել է միայն դեկտեմբեր ամսվա գումարը,

իսկ նախկին պարտքը մարել է 10.02.2020թ.-ին: Հարկ է նշել, որ արվյալ ենթաբաժանորդին բազմակի անգամ զգուշացվել է վերջինիս կողմից պարտքը չվճարելու դեպքում խստագույն միջոցների կիրառման մասին, այն է՝ տեխնիկական սպասարկման պայմանագրի լուծում և էլեկտրամատակարարման դադարեցում, որից հետո վերջինս կատարել է համապատասխան վճարումները: Նույն ընկերությունը 31.12.2020թ.-ի դրությամբ, ունեցել է կուտակած սպասարկման վճարման ենթակա գումար 83933 դր., որը գոյացել է 2020թ.-ի պանդեմիայի ընթացքում հայտնի պարճառներով, սակայն 18.01.2021թ.-ին, 23.03.2021թ.-ին և 30.03.2021թ.-ին վերջինիս կողմից ամբողջությամբ մարվել են նախկինում կուտակված պարտքերը:

«Կինոթատրոն Մոսկվա» ՍՊ ընկերությունը 31.12.2019թ.-ի դրությամբ, ունեցել է սպասարկման վճարման ենթակա գումար համաձայն 10.01.2020թ.-ի ակտի 3500 դր, որը ըստ իր հետ կնքած հ.ՄԿ-117/Է-2011թ., 25.03.2011թ. տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման պայմանագրի 3.2 կետի պետք է վճարեր ակտը ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում, ինչը և կատարվել է: Նույն ընկերությունը 31.12.2020թ.-ի դրությամբ, ունեցել է կուտակած սպասարկման վճարման ենթակա գումար 81270 դր, որը գոյացել է 2020թ.-ի պանդեմիայի ընթացքում, սակայն 19.01.2021թ.-ին և 18.03.2021թ.-ին վերջինիս կողմից նույնպես ամբողջությամբ մարվել են նախկինում կուտակված պարտքերը:

Իսկ ինչ վերաբերում է հոսանքազրկելուն, ապա դա «ՀԷՑ» ՓԲԸ-ի իրավասությունների ներքո է և մեյրոպոլիսները կարող է միայն դիմել «ՀԷՑ» ՓԲԸ-ին վերջինիս հետ էներգոմատակարարման պայմանագիրը լուծելու հարցով:

Անբարեխիղճ ենթաբաժանորդները, մեյրոպոլիսների կողմից նախազգուշացում ստանալուց հետո հիմնականում կատարում են վերը նշված վճարումները, սակայն եղել են դեպքեր, որ վճարումները ուշացել են հարգելի պարճառով՝ մասնավորապես կորոնավիրուսային պանդեմիայի ժամանակ:

2019 թվականին Մետրոպոլիտենի եկամուտը օտարումներից կազմել է 14,635.7 հազ. դրամ, 2020 թվականի օտարում չի կատարվել:

Մետրոպոլիտենի և «Եվրոպա» ՍՊԸ միջև կնքվել է P-50 տեսակի ռելսերի օտարման 18.11.2019թ. թիվ ՄԿ-21/Վ-2019 պայմանագիրը: Պայմանագրով նախատեսվել է օտարել շահագործումից դուրս եկած 130 տոննա ռելս՝ 6,500.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով: 2019 թվականին դեկտեմբերի 5-ին կնքված համաձայնագրով պայմանագրում կատարվել է փոփոխություն, որով վաճառվող ապրանքի քաշը կազմել է 140 տոննա՝ 7,000.0 հազ. դրամ արժեքով: Մետրոպոլիտենը մինչև ապրանքի օտարումը ռելսերի գնի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար հարցումներ է ուղարկել «Մետեքսիմ» ՍՊԸ և «Եվրոպա» ՍՊԸ: Հարցմանը ի պատասխան «Մետեքսիմ» ՍՊԸ առաջարկել է 1 կիլոգրամի համար 36 դրամ (ներառյալ ԱԱՀ), «Եվրոպա» ՍՊԸ հարցմանը չի պատասխանել: Սակայն, կնքված պայմանագրով ռելսերը օտարվել են «Եվրոպա» ՍՊԸ՝ 1 կգ 50 դրամով (ներառյալ ԱԱՀ):

Մետրոպոլիտենի և «Մետեքսիմ» ՍՊԸ միջև կնքվել է 04.11.2019թ. թիվ ՄԿ-20/Վ-2019 առուվաճառքի պայմանագիր, որով վաճառքի ենթակա ապրանքներ են հանդիսացել օգտագործված, իրենց նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման համար ոչ պիտանի ապրանքներ՝ մետաղի ջարդոն: Պայմանագրի ընդհանուր գումարը կազմել է 7,554,33 հազ. դրամ: Մետրոպոլիտենի կողմից դուրս գրված հարկային հաշիվների համաձայն՝ օտարվել է սև մետաղի ջարդոն՝ 97898 կգ, ալյումին՝ 6223.5 կգ, պղինձ՝ 127.6 կգ, թթվային մարտկոցներ՝ 6615 կգ: Մետրոպոլիտենը մինչև ապրանքների օտարումը գնի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար հարցում է ուղարկել միայն «Մետեքսիմ» ՍՊԸ-ին՝ նշելով ապրանքների տեսակը և քաշը: Հարցմանը ի պատասխան ընկերությունը առաջարկել է հետևյալ գները՝ թթվային մարտկոցներ՝ 1 կգ 300 դրամ, սև մետաղի ջարդոն՝ 1 կգ 30 դրամ, պղնձի ջարդոն՝ 1 կգ 2100 դրամ, ալյումինի, դյուրալյումինի ջարդոն՝ 1 կգ 380 դրամ: Գները ներառում են ԱԱՀ: «Մետեքսիմ» ՍՊԸ կողմից առաջարկված գները հիմք են ընդունվել պայմանագրի կնքման և ջարդոնների օտարման համար:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 61.2. հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարք կնքելու մասին որոշումը, եթե գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի մինչև 25 տոկոսը, կայացնում է գործադիր մարմինը, եթե Ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ»: Սակայն, ռելսերի և մետաղի ջարդոնների օտարման գործարքների վերաբերյալ Մետրոպոլիտենի գործադիր մարմնի (տնօրենի) կողմից որոշումները բացակայում են:

Մետրոպոլիտենի բացառություն

Արձանագրության «Մետրոպոլիտենի եկամուտներ» բաժնի՝ Ընկերության օտարումներից ստացված եկամուտների մասով հայտնում ենք, որ համաձայն տվյալ ժամանակահատվածում, գնումները համակարգող Ս. Ղազեյանի բացառության, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ և «Մետրէքսիմ» ՍՊԸ միջև 2019թ նոյեմբերի 4-ին կնքվել է պայմանագիր սև մետաղի, ալյումինի, պղնձի ջարդոնի, ինչպես նաև թթվային մարտկոցների առք ու վաճառքի վերաբերյալ: Մետրոպոլիտենը 2019թ հոկտեմբերի 22-ին էլեկտրոնային հարցում է ուղարկել «Մետրէքսիմ» ՍՊԸ (ինչպես նաև 2 այլ կազմակերպությունների, որոնց այս պահին չեմ կարողանում հիշել) հանձման ենթակա նյութերի գնային առաջարկի վերաբերյալ: Առաջարկը էլեկտրոնային տարբերակով 22.10.2019 ստացվել է միայն «Մետրէքսիմ» ՍՊԸ-ից (առաջարկը կցվում է):

Միաժամանակ 2019թ նոյեմբերի 8-ին էլեկտրոնային եղանակով հարցում է ուղարկվել «Եվրոպա» ՍՊԸ-ին շահագործումից դուրս եկած P 50 տիպի ռելսերի վաճառքի գնային առաջարկ ստանալու վերաբերյալ (հարցումը կցվում է):

Հարցմանը բանավոր կարգով պատասխանել է «Եվրոպա» ՍՊԸ 1 կգ ռելսի գնման արժեքը առաջարկելով 50 ՀՀ դրամ:

Նկատի ունենալով, որ «Եվրոպա» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գինը ամենաբարձրն է (50 ՀՀ դրամ 31 ՀՀ դրամի փոխարեն), մետրոպոլիտենի

տնօրինությունը որոշում է ընդունել շահագործումից դուրս եկած ռելսերը վաճառել «Եվրոպա» ՍՊԸ, որի վերաբերյալ կա երկկողմ պայմանագիր:

Ինչ վերաբերվում է «Բաժնետիրական ընկության մասին» ՀՀ օրենքի 61.2 հոդվածի 1 կետի պահանջներին, ապա գնումների և մատակարարման բաժինը չէր կարող իմանալ ընկերության ակտիվների արժեքը (դա չի մտնում գնումների և մատակարարման բաժնի գործառույթների մեջ), ինչպես այդ պահին, այնպես էլ ընկերության ողջ գործունեության ընթացքում:

Մետրոպոլիտենի ծախսեր

Համաձայն ներկայացված հաշվետվությունների՝ Մետրոպոլիտենի աշխատավարձի տարեկան ծախսերը 2019 թվականին կազմել են 2,045,979.4 հազ. դրամ, որից պարգևատրումները՝ 266,311.0 հազ. դրամ: 2020 թվականին ծախսերը կազմել են 1,996,373.8 հազ. դրամ, որից պարգևատրումները՝ 141,329.4 հազ. դրամ:

Ստուգվել են Մետրոպոլիտենի 2019 և 2020 թվականների աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ծախսերը: Ստուգման համար տեղեկատվության աղբյուր են հանդիսացել հաշվապահական ծրագրից («Հայկական ծրագրեր») արտահանված հաշվետվությունները (շախմատածև), աշխատավարձի հաշվարկի ամփոփ տեղեկագրերը, եկամտային հարկի և տարեկան կատարողականի հաշվետվությունները, ինչպես նաև բանկային քաղվածքները և աշխատակիցների աշխատանքային պայմանագրերը: Մետրոպոլիտենի կողմից 2019 և 2020 թվականներին աշխատավարձի հաշվառումն իրականացվել է հաշվապահական ծրագրով՝ կրկնակի գրանցման մեթոդի կիրառմամբ: Հաշվապահական գործառույթ իրականացնող ստորաբաժանման կողմից աշխատավարձի հաշվառումն հաշվետու ժամանակաշրջանում ապահովվել է փաստաթղթավորման միջոցով, որը համապատասխանել է հաշվապահական գրանցումներին: Այդուհանդերձ, փաստաթղթավորման մեջ առկա են առանձին թերություններ: Առանձին դեպքերում շրջանառվող փաստաթղթերը, որպես

ձևաչափ, հաստատված չեն Մետրոպոլիտենի կողմից, և փաստաթղթերի վրա բացակայել են ձևակերպման համար կարևոր վավերապայման հանդիսացող ամսաթվերը, իսկ տարբեր մասնաճյուղերի կողմից ներկայացվող հաշվապահական փաստաթղթերն լրացվել են ոչ միասնական ձևաչափով, որոնք ընդունվել են որպես ձևակերպման հիմք համապատասխան մասնաճյուղի կողմից:

2019 և 2020 թվականների փաստացի հաշվարկված աշխատավարձերի ծախսերը համադրվել են բանկային քաղվածքներով արտացոլված փաստացի վճարումների հետ, որոնց արդյունքներով ձեռք են բերվել հաստատումներ դրանց ներկայացման ճշգրտության, առկայության, ամբողջականության, ճիշտ ժամանակաշրջանում արտացոլման վերաբերյալ: Վերլուծական ընթացակարգի շրջանակում բանկային քաղվածքներից արտահանվել են հաշվետու ժամանակաշրջանում փոխանցված աշխատավարձերի, դրանցից պահված հարկերի և պարտադիր վճարների ծախսերը, որոնք համադրվել են շախմատաձև հաշվետվություններում արտացոլված հաշվետու ժամանակաշրջանի համապատասխան գրանցումների հետ: Անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

2019 և 2020 թվականներին Մետրոպոլիտենը պետական բյուջե փոխանցել է համապատասխանաբար՝ 483,764.1 հազ. դրամ և 435,707.7 հազ. դրամ եկամտային հարկ: Հաշվետու ժամանակաշրջանում փաստացի հաշվարկված աշխատավարձերի մասով ծախսերը համադրվել են եկամտային հարկի հաշվետվություններով ներկայացված տեղեկատվության հետ: Շախմատաձև հաշվետվություններից ընտրվել են հաշվետու ժամանակաշրջանի բոլոր ամիսների քաղվածքները, որոնցում բոլոր աշխատակիցների մասով հաշվարկված եկամուտներից կատարվել են եկամտային հարկի պահումներ: Ստուգմամբ պարզվել է, որ 2019 թվականի հաշվետու ժամանակաշրջանի ավարտին եկամտային հարկի մասով առաջացել է 258.1 հազ. դրամի պարտք, որը մարվել է հաջորդ հաշվետու տարվա սկզբին:

2019 և 2020 թվականներին Մետրոպոլիտենի կողմից թվով 38 աշխատակցի տրամադրվել են համապատասխանաբար՝ 6,226.1 հազ. դրամի և 5,885.0 հազ. դրամի արձակման նպաստներ: Ընտրանքային կարգով ստուգվել են արձակման նպաստների հատկացման հիմքերը, և պարզվել է, որ դրանք տրամադրվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներին համապատասխան: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ «հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում ՀՀ օրենսդրության համաձայն ստացվող նպաստների գումարները, բացառությամբ ժամանակավոր անաշխատունակության նպաստների և վարձու աշխատողների ու ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահովված ֆիզիկական անձանց մայրության նպաստների գումարների»: Սակայն, ստուգմամբ պարզվել է, որ Մետրոպոլիտենի կողմից 2019 և 2020 թվականներին արձակման նպաստներից հաշվարկվել և գանձվել է եկամտային հարկ, որի արդյունքում աշխատողները ստացել են 2,954.4 հազ. դրամով պակաս արձակման նպաստ:

Մետրոպոլիտենի բացառություն

Արձակման նպաստի հարկման հետ կապված տեղի էր ունեցել վրիպակ ՀԾ հաշվապահական ծրագրում: Վրիպակը ուղղվել է 2021թ-ի փետրվար ամսին:

2019 և 2020 թվականներին Մետրոպոլիտենի կողմից վճարվել է համապատասխանաբար՝ 19,128.8 հազ. դրամ և 21,089.0 հազ. դրամ կուտակային սոցիալական վճար: Ստուգման շրջանակում աշխատակիցների բազմությունից ընտրվել է 1974 թվականին ծնված և 1974 թվականից հետո ծնված աշխատակիցների ցանկ: Ստուգման արդյունքում պարզվել է, որ կուտակային կենսաթոշակների վճարման մասով կատարված ընտրանքում ներառված բոլոր աշխատակիցների աշխատավարձերից պահումները կատարվել են օրենսդրության պահանջներին համապատասխան:

2019 և 2020 թվականներին Մետրոպոլիտենի կողմից քաղաքացիաիրավական հիմքով կնքված պայմանագրերով աշխատանքի

վարձատրությունը կազմել է համապատասխանաբար՝ 50,860.0 հազ. դրամ և 15,057.7 հազ. դրամ (հավելված 2):

Քաղաքացիաիրավական հիմքով կնքված առանձին պայմանագրեր և դրանց շրջանակներում կազմված կատարողական ակտերը թերի են, քանի որ չեն պարունակում անհրաժեշտ տեղեկատվություն նախատեսված և փաստացի մատուցված ծառայությունների վերաբերյալ: Օրինակ, Մետրոպոլիտենի և աշխատանքային խմբի միջև կնքված ՄՊ-1/Գ-2019 պայմանագրում բացակայում է միավորի գնի գնահաշվարկը, պայմանագրի կատարման արդյունքի կամ դրա մի մասի ընդունման չափորոշիչները և կարգը, իսկ կատարողական ակտերում բացակայում են հաստատման ամսաթվերը, կատարված աշխատանքի ծավալը:

Մետրոպոլիտենի բացառություն

Համաձայն «Գ» մասնաճյուղի պետ Ա. Բեգլարյանի բացատրագրի Ձեզ ենք ներկայացնում մետրոպոլիտենի և աշխատանքային խմբի միջև կնքված ՄՊ-1/Գ-2019 պայմանագրով նախատեսված գնահաշվարկը, ինչպես նաև գնահաշվարկի համար հիմք հանդիսացող ժամանակաչափի հաշվարկը (խրոնոմետրաժ), կատարողական ակտի և կատարված աշխատանքի ծավալի 1 օրինակ:

Գնահաշվարկով 1գծմ-ի արժեքը կազմել է 4475 դրամ: Պայմանագրի շրջանակներում գինը սահմանվել է 3000 դրամ:

Սույնով տեղեկացնում ենք, որ 2014թ. Մետրոպոլիտենի և <<Магистраль>>-ՊԹԸ հիմնարկության միջև կնքված պայմանագրի համաձայն 1 գծմ ռելսի ալիքաձև մաշվածքի հղկման աշխատանքների համար նախատեսված է եղել 10164 դրամ ներառյալ ԱԱՀ:

Ընտրանքային կարգով ստուգվել է Մետրոպոլիտենի և աշխատանքային խմբի միջև կնքված ծառայությունների մատուցման 14.01.2019թ. թիվ ՄՊ-1/Բ-2019 պայմանագիրը՝ 10,000.0 հազ. դրամ արժեքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Սույն օրենքը կարգավորում է պատվիրատուների կողմից ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերելու գործընթացի հետ կապված հարաբերությունները,

սահմանում այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները»։ Մետրոպոլիտենը, որպես պատվիրատու իրեն վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ վագոնների վերանորոգման ծառայությունների ձեռքբերումը իրականացրել է առանց գնման գործընթացի։ Պայմանագրով նախատեսվել է Մետրոպոլիտենի 20 հաստիքային աշխատողների ներգրավմամբ իրականացնել չորս վագոնների թվով ութ անվասայլակների և պնևմատիկ սարքավորումների վերանորոգման աշխատանքներ։ Մետրոպոլիտենի կողմից կազմվել և հաստատվել է գնահաշվարկ մեկ շարժակազմի՝ երկու վագոնի չորս անվասայլակների և պնևմատիկ սարքավորումների վերանորոգման համար։ Գնահաշվարկով այդ աշխատանքների կատարման աշխատատարությունը կազմում է 7748.2 մարդ/ժամ, հետևաբար չորս վագոնի ութ անվասայլակների և պնևմատիկ սարքավորումների վերանորոգման աշխատանքների աշխատատարությունը կազմում է 15496.4 մարդ/ժամ, կամ մեկ աշխատակցի համար՝ 774.8 ժամ։ Պայմանագրով նախատեսվել է աշխատանքը կատարել 2019 թվականի հունվարի 26-ից մինչև մայիսի 23-ը, որը կազմում է 79 աշխատանքային օր կամ 632 աշխատանքային ժամ։ Հետևաբար, մեկ աշխատողի համար փաստացի անհամապատասխանությունը կազմում է 142.8 ժամ, և հաշվի առնելով գնահաշվարկով սահմանված 1 ժամի դրույքաչափը՝ 939.3 դրամ, անհամապատասխանությունը գումարային կազմում է 134.1 հազ. դրամ։ Փաստորեն, ըստ գնահաշվարկի, այդ աշխատողները պայմանագրային պարտավորությունները կատարելու համար աշխատել են օրական 9.8 ժամ։ Հետևաբար, հաստիքով նախատեսված իրենց պարտականությունները կատարելու համար այդ աշխատողները աշխատաժամանակ չեն ունեցել, սակայն, այդ ժամանակահատվածում այդ աշխատողներին, որպես հաստիքային աշխատավարձ հաշվարկվել և վճարվել է ևս 9,049.0 հազ. դրամ։

Մետրոպոլիտենի բացառություն

Արձանագրության «Մետրոպոլիտենի ծախսեր» բաժնի՝ Ընկերության քաղաքացիաիրավական հիմքով կնքված պայմանագրերի մասով հայտնում ենք, որ

համաձայն «Քարշ» մասնաճյուղի պետ՝ Վ. Մելյանի բացատրության քաղաքացիաիրավական հիմքով կնքված մետրոպոլիտենի և «Քարշ» մասնաճյուղի աշխատանքային խմբի միջև կնքված ծառայությունների մատուցման 14.01.2019թ.թիվ ՄՊ- 1/Ք- 2019 պայմանագրով (10,000,0 հազար դրամ արժեքով) իրականացված 4 վագոնների թվով 8 անվասայլակների և պնևմատիկ սարքավորումների վերանորոգման աշխատանքների բացատրություն՝

1. Մետրոպոլիտենը, որպես պատվիրատու իրեն վերապահված լիազորությունների կատարման շրջանակներում վագոնների վերանորոգման ծառայությունները իրականացրել է համաձայն շարժակազմերի վազքերի, իրականացված և նախատեսված վերանորոգումների մասին տեղեկանքի(տեղեկանքը կցվում է)և համաձայն՝

- Վագոնի մեխանիկական (անվասայլակներ, ինքնակցիչներ) էլեկտրական և պնևմատիկ համակարգի վերանորոգում՝ համաձայն «Ց-Մետրո 4592»,

- «Վագոնների սարքավորումների չափսերի թույլատրելի շեղումների և մաշվածության», (9,7170,30,00,001,00ԴԴ-2) հատոր I և II

- և անվագույգերի «Ց-Մետրո 3746» հրահանգների պահանջների:

- Վերանորոգվող շարժակազմերը՝ 0103-0104 և 0059-0062 01.01.2019թ դրությամբ ունեին համապատասխանաբար 539 հազ. կմ և 530 հազ. կմ արդեն իսկ գերնորմատիվային վազքեր: Մետրոպոլիտեններում ընդունվել է նորմատիվային վազք՝ 350հազ.կմ:

2. Կազմվել և հաստատվել է գնահաշվարկ մեկ շարժակազմի՝ 2 վագոնների 4 անվասայլակների և պնևմատիկ սարքավորումների վերանորոգման համար: Գնահաշվարկով այդ աշխատանքների կատարման աշխատատարությունը կազմում է 7748,2մարդ/ժամ, հետևաբար 4 վագոնի 8 անվասայլակների և պնևմատիկ սարքավորումների վերանորոգման աշխատանքների աշխատատարությունը կազմում է 15496,4մարդ/ժամ կամ մեկ աշխատակցի համար՝ 774,8 ժամ:

Համաձայն պայմանագրի կատարած աշխատանքների գումարը որպես աշխատավարձ հաշվարկված է 7277,8 հազ. դրամ: Սակայն բանավոր

պայմանավորվածության և աշխատանքային խմբի համաձայնությամբ տրամադրվել է 5000 հազ. դրամ: Աշխատանքները կատարվել են հանգստյան, տոնական օրերին և ոչ աշխատանքային ժամերի:

2019 և 2020 թվականներին Մետրոպոլիտենի ժամավճարով աշխատող մեքենավարներին և բետոնագործ բանվորներին վճարվել է համապատասխանաբար՝ 154,493.2 հազ. դրամ և 133,862.0 հազ. դրամ աշխատավարձ: Ընտրանքային կարգով ստուգվել է 2019 թվականի հունվար ամսին բետոնագործ բանվորների կողմից կատարված աշխատանքի դիմաց վարձատրության չափը: Մետրոպոլիտենի թունելային գծերի փայտակոճերի փոխարինման և վերաբետոնավորման համար ըստ աշխատանքի կատարման վայրի և տեսակի (կոր տեղամասեր, ուղիղ հատված, կայարաններ, փայտակոճերի փոխարինմամբ կամ առանց դրա) կազմվել և Մետրոպոլիտենի տնօրենի կողմից հաստատվել են հինգ գնահաշվարկներ: Համաձայն կատարողական ակտերի, հունվար ամսին իրականացվել է Մետրոպոլիտենի թունելային գծերի կոր տեղամասերում՝ փայտակոճերի փոխարինմամբ, 12.5 գծմ և առանց փայտակոճերի փոխարինման՝ 18 գծմ վերաբետոնավորման աշխատանք: Ըստ հաստատված գնահաշվարկների, այդ աշխատանքների 1 գծմ աշխատատարությունը կազմում է համապատասխանաբար՝ 31.6 մարդ/ժամ և 28.8 մարդ/ժամ, կամ կատարված ծավալի համար ընդամենը՝ 913.4 մարդ/ժամ: Աշխատանքները կատարվել են միայն «պատուհանի» (գծերի պարտադիր հոսանքազրկում) ընթացքում, որի համար կիրառվում է երեք գործակից, կամ աշխատատարությունը կազմել է 2740.2 մարդ/ժամ: Հետևաբար, հաշվի առնելով հաստատված ժամային դրույքաչափը՝ 613.69 դրամ, հունվար ամսին բետոնագործ բանվորների աշխատանքի վարձատրության չափը պետք է կազմեր 1,681.6 հազ. դրամ, սակայն, ըստ աշխատավարձերի ամփոփագրերի հաշվարկվել և փաստացի վճարվել է 2,164.7 հազ. դրամ կամ 483.1 հազ. դրամով ավելի գումար:

Աշխատողների աշխատավարձերի հաշվարկման և վճարման ճշտության ստուգման շրջանակում Մետրոպոլիտենի աշխատողների ՀՀ

սահմանահատումների վերաբերյալ արտաքին հաստատում ստանալու նպատակով ՀՀ հաշվեքննիչ պալատը դիմել է ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը: ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից ստացված տեղեկատվությունը համադրելով է Մետրոպոլիտենի աշխատողներին աշխատավարձի վճարման տեղեկագրերի և բանկային քաղվածքների հետ պարզվել է, որ առանձին աշխատողներ 2019 և 2020 թվականների ընթացքում բացակայել են Հայաստանի Հանրապետությունից, սակայն այդ ժամանակահատվածում այդ աշխատողներին հաշվարկվել և վճարվել է աշխատավարձ:

- Ֆինանսական բաժնի գլխավոր հաշվապահի տեղակալը 2020 թվականի փետրվարի 26-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գտնվել է ՀՀ տարածքից դուրս, սակայն այդ ժամանակահատվածի համար նրան հաշվարկվել և վճարվել է 1,771.0 հազ. դրամ աշխատավարձ:
- Թունելային կառույցների ուղեմասի թունելային բանվորը 2019 թվականի ապրիլի 25-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 2-ը գտնվել է ՀՀ տարածքից դուրս, սակայն այդ ժամանակահատվածի համար նրան հաշվարկվել և վճարվել է 634.0 հազ. դրամ աշխատավարձ:
- ԷՈւ ջրահեռացման ագրեգատների սպասարկման և վերանորոգման տեղամասի էլեկտրամեխանիկը 2019 թվականի հունիսի 28-ից մինչև 2019 թվականի հուլիսի 8-ը, 2020 թվականի նոյեմբերի 18-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գտնվել է ՀՀ տարածքից դուրս, սակայն այդ ժամանակահատվածի համար նրան հաշվարկվել և վճարվել է 144.4 հազ. դրամ աշխատավարձ:

Մետրոպոլիտենի առարկություն

Արձանագրության «Մետրոպոլիտենի ծախսեր» բաժնի՝ աշխատողների աշխատավարձերի հաշվարկման և վճարման ճշգրտության ստուգման մասով արձանագրվել էր, որ ֆինանսական բաժնի գլխավոր հաշվապահի տեղակալի 2020 թվականի փետրվարի 26-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը բացակայել է

Հայաստանի Հանրապետությունից, սակայն այդ ժամանակահատվածում վերջինիս հաշվարկվել և վճարվել է աշխատավարձ:

Ֆինանսական բաժնի գլխավոր հաշվապահի տեղակալը Հայաստանի Հանրապետությունից դուրս է եկել 2020 թվականի փետրվարի 26-ին ՀՀ անձնագրով (անձնագրի պատճեն կցվում է): Մեկնել է Ռուսաստանի Դաշնություն, որտեղ ստացել է ՌԴ քաղաքացիություն և ՌԴ անձնագիր (անձնագրի պատճեն կցվում է) և վերադարձել է Հայաստանի Հանրապետություն 2020 թվականի մարտի 11-ին ժամը 06:10 (տոմսը կցվում է) նշված անձնագրով: Ներկայացել է աշխատանքի մարտի 11-ին ժամը 09:00:

Ֆինանսական բաժնի գլխավոր հաշվապահի տեղակալը 2020 թվականի փետրվարի 26-ից մինչև մարտի 06-ը ներառյալ գտնվել է իրեն հասանելիք ամենամյա արձակուրդում (արձակուրդի հրամանի պատճեն կցվում է), աշխատանքի պետք է ներկայանար մարտի 09-ին, սակայն պայմանավորված կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) հանգամանքով ավիատոմսը կարողացել է ձեռք բերել մարտի 11-ի համար: Մարտի 09-ին և մարտի 10-ին աշխատել է հեռավար եղանակով: Մնացած ժամանակահատվածում Անի Մակարյանը Հայաստանի Հանրապետության տարածքը չի լքել:

Արձանագրության «Մետրոպոլիտենի ծախսեր» բաժնի՝ աշխատողների աշխատավարձերի հաշվարկման և վճարման ճշգրտության ստուգման մասով արձանագրվել էր, որ ԷՈԻ ջրահեռացման ագրեգատորների սպասարկման և վերանորոգման տեղամասի էլեկտրամեխանիկը 2020 թվականի նոյեմբերի 18-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը բացակայել է Հայաստանի Հանրապետությունից, սակայն այդ ժամանակահատվածում վերջինիս հաշվարկվել և վճարվել է աշխատավարձ:

Համաձայն «ԷՄ» մասնաճյուղի պետ՝ Ս.Մնացականյանի պարզաբանման վերջինս 2020թ-ի նոյեմբերի 18-ից մինչև 2020թ դեկտեմբերի 31-ը ունի չվճարվող արձակուրդի դիմում 17.11.2020թ. և հրաման թիվ 94-Ա/ԷՄ 18.11.2020թ-ից մինչև

16.01.21թ. ներառյալ գտնվել է չվճարվող արձակուրդում (հաշվապահական փաստաթղթերը և տեղեկագրերը կցվում են):

Հաշվեքննողի առձագանք

Առարկությունը ֆինանսական բաժնի գլխավոր հաշվապահի տեղակալի մասով ընդունվել է:

Մետրոպոլիտենի բացառություն

Արձանագրության «Մետրոպոլիտենի ծախսեր» բաժնի՝ աշխատողների աշխատավարձերի հաշվարկման և վճարման ճշտության ստուգման մասով արձանագրվել էր, որ ԷՈԽ ջրահեռացման ագրեգատորների սպասարկման և վերանորոգման տեղամասի էլեկտրամեխանիկը 2019 թվականի հունիսի 28-ից մինչև 2019 թվականի հուլիսի 31-ը բացակայել է Հայաստանի Հանրապետությունից, սակայն այդ ժամանակահատվածում վերջինիս հաշվարկվել և վճարվել է աշխատավարձ:

Համաձայն «ԷՄ» մասնաճյուղի պետ՝ Ս.Մնացականյանի պարզաբանման՝ վերջինը 2019թ հունիսի 28-ից մինչև 2019թ հուլիսի 8-ը իսկապես չի եղել ՀՀ տարածքում (ճշտվել է, որ նա եղել է ՌԴ-ում) թյուրիմացաբար տաբելում նրան դրվել է ներկա: Նշված բացթողումը համարում է իր անփութությունը և փոխհատուցել է ձեռնարկությանը պատճառած նյութական (դրամական) վնասը ամբողջությամբ (հաշվապահական փաստաթղթերը և բացառագիրը կցվում են):

Արձանագրության «Մետրոպոլիտենի ծախսեր» բաժնի՝ աշխատողների աշխատավարձերի հաշվարկման և վճարման ճշտության ստուգման մասով արձանագրվել էր, որ թունելային կառույցների ուղեմասի թունելային բանվորը 2019 թվականի ապրիլի 25-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 2-ը բացակայել է Հայաստանի Հանրապետությունից, սակայն այդ ժամանակահատվածում վերջինիս հաշվարկվել և վճարվել է աշխատավարձ:

Համաձայն «Գ» մասնաճյուղի պետ՝ Ա.Բեգլարյանի պարզաբանման Թունելային կառույցների ուղեմասի բանվորը 2019 թվականի ապրիլի 25-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 2-ը գտնվել է ՀՀ տարածքից դուրս, սակայն այդ

ժամանակահատվածի համար ստացել է աշխատավարձ: Բացակայության պարճառը եղել է բուժման նպատակով երկրից դուրս գտնվելը, կապված երեխա չունենալու պարճառով: Բուժման կուրսը երկարաձգվել է տարբեր պարճառներով:

Նույն տեղամասի վարպետը՝ հանդիսանալով վերջինիս հայրը, կատարել է վերջինիս պարտականությունները տեղյակ չպահելով իր վերադասին:

Բանվորը պարտավորվում է փոխանցել ստացած 634000 (վեցհարյուրերեսունչորս) հազար դրամը մետրոպոլիտենի բյուջե (բացատրագիրը կցված է Մետրոպոլիտենի պատասխանին):

Հայտնում ենք նաև որ սույն փաստով տնօրենի ժ/պ Գ. Ավերիսյանը հրավիրել է խորհրդակցություն՝ հրահանգել կազմել հանձնաճողով, իրականացնել ծառայողական քննություն:

Ստուգման շրջանակում մասնագիտական հմտություններ պահանջող պաշտոնների մասով ուսումնասիրվել է այդ պաշտոնները զբաղեցնող աշխատողների որակավորման, կրթության և մասնագիտական հմտությունների համապատասխանությունը պաշտոնների անձնագրերով սահմանված պահանջներին: Պարզվել է, որ Մետրոպոլիտենի ստորաբաժանումներում մասնագիտական հմտություններ պահանջող առանձին հաստիքներ 2019 և 2020 թվականներին զբաղեցրել են աշխատողներ, որոնց կրթությունը, մասնագիտական որակավորումը և աշխատանքային փորձը չի համապատասխանում այդ պաշտոնների անձնագրերի պահանջներին (հավելված 3):

Մետրոպոլիտենի բացատրություն

Արձանագրության «Մետրոպոլիտենի ծախսեր» բաժնի՝ Ընկերության ստորաբաժանումներում մասնագիտական հմտություններ պահանջող հաստիքներ մասով հայտնում ենք, որ համաձայն «ԱԿԲ» պետ՝ Մ. Գրիգորյանի բացատրության ընկերությունում գործող աշխատավարձերը ցածր են, ոչ միշտ է հնարավոր լինում թափուր աշխատատեղերը համալրել համապատասխան մասնագետներով: Աշխատանքային անհրաժեշտությամբ պայմանավորված՝

թափուր աշխատատեղերը համալրելու և ընկերության գործունեությունը անխափան ապահովելու համար, ինչպես նաև երիտասարդ կադրեր ներգրավելու նպատակով երբեմն գնում ենք որոշակի զիջումների: Նախնական հարցազրույցի ընթացքում այն երիտասարդները, ովքեր դրսևորում են ցանկություն սովորելու, դառնալու մասնագետ և նկատվում է պոպենցիալ վերջիններիս մոտ, գնում ենք նրանց ընդառաջ՝ պայմանով: Ընդունվում են աշխատանքի փորձաշրջանով, ծանոթանում են պաշտոնի անձնագրով նախատեսված աշխատանքային գործառույթներին, կցվում են արհեստավարժ մասնագետներին և որոշակի ժամանակ անց անմիջական ղեկավարի և ստորաբաժանման ղեկավարի կողմից ստուգվում է վերջիններիս ձեռք բերած գիտելիքները և որոշում կայացվում հետագա աշխատանքը շարունակելու վերաբերյալ:

2019 և 2020 թվականներին Մետրոպոլիտենի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում առաջացել է շահույթ և պետական բյուջե վճարվել է շահութահարկ: 2019 թվականին Մետրոպոլիտենը պետական բյուջե վճարել է 127,611.0 հազ. դրամ շահութահարկ, որից 45,414.2 հազ. դրամ՝ 2018 թվականի շահութահարկի պարտավորության դիմաց: 2020 թվականին պետական բյուջե վճարվել է 75,342.4 հազ. դրամ շահութահարկ, որից 20,130.1 հազ. դրամ՝ 2019 թվականի շահութահարկի պարտավորության դիմաց:

Մետրոպոլիտենի բացառություն

2020թ-ին «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն տարին փակել է հարկային վնասով և շահութահարկ վճարող չի համարվել: 2020թ-ին վճարված 75 342 351 ՀՀ դրամ շահութահարկից 55 212 217 ՀՀ դրամը հանդիսացել է որպես շահութահարկի կանխավճար համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի Գլուխ 25, հոդված 135, կետ 1-ի «Ռեզիդենտ շահութահարկ վճարողը և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողը պարտավոր են ընթացիկ հարկային տարվա յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև տվյալ եռամսյակի վերջին ամսվա 20-ը ներառյալ, կատարել շահութահարկի

կանխավճարներ (բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերի)՝ նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի 20 տոկոսով հաշվարկվող գումարի և նախորդ եռամսյակի ընթացքում ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների երկու տոկոսով հաշվարկվող գումարի նվազագույնի չափով», իսկ 20 130 134 ՀՀ դրամը 2019թ-ի շահութահարկի վճարն է:

2019 և 2020 թվականներին Մետրոպոլիտենը պետական բյուջե վճարել է համապատասխանաբար՝ 360,459.5 հազ. դրամ և 356,186.5 հազ. դրամ ավելացված արժեքի հարկ: Մետրոպոլիտենի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված՝ «Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկների» համաձայն՝ 2019 թվականին ավելացված արժեքի հարկով հարկման բազան ՀՀ հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածի 16-րդ կետի համապատասխան կազմել է 3,810,409.8 հազ. դրամ, 2020 թվականին՝ 2,930,902.8 հազ. դրամ, ՀՀ պետական բյուջե ավելացված արժեքի վճարման պարտավորությունը (առանց պակասեցումների) կազմել է համապատասխանաբար՝ 699,227.8 հազ. դրամ և 552,543.3 հազ. դրամ: Փաստացի, ավելացված արժեքի հարկի հարկման բազաների՝ 879,507.0 հազ. դրամ և պարտավորությունների՝ 146,684.5 հազ. դրամ տարբերության պայմաններում, Մետրոպոլիտենի կողմից 2019 և 2020 թվականներին պետական բյուջե վճարվել է մոտ նույն գումարի ավելացված արժեքի հարկ (տարբերությունը՝ 4,273.0 հազ. դրամ): Ստուգմամբ պարզվել է, որ 2019 թվականի հուլիս ամսին ավելացված արժեքի հարկի պարտավորությունից «Ա-Գազու» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի կողմից ներկայացված հարկային հաշվի հիման վրա պակասեցվել է 145,824.6 հազ. դրամ ավելացված արժեքի հարկ: «Ա-Գազու» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղը իրականացնում է Մետրոպոլիտենի դրենաժային թունելի կառուցումը, որի համար 2019 թվականին Մետրոպոլիտենին տրամադրվել է 799,497.2 հազ. դրամ սուբսիդիա՝ առանց ավելացված արժեքի հարկի: Համաձայն ՀՀ հարկային

օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ «Օրենսգրքի 70-րդ և 74-րդ հոդվածներով սահմանված կարգով բյուջե վճարման ենթակա կամ բյուջեից փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գումարների հաշվարկման նպատակով ԱԱՀ-ի հաշվանցումներ (պակասեցումներ) չեն կատարում՝ եթե ձեռք բերված և (կամ) ներմուծված ապրանքները, ընդունված աշխատանքները և (կամ) ստացված ծառայությունները վերագրվում են ԱԱՀ-ից ազատված գործարքներին, բացառությամբ Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 19-րդ և 31-րդ կետերով սահմանված դեպքերի, երբ ԱԱՀ-ի հաշվանցումները (պակասեցումները) կատարվում են Օրենսգրքով սահմանված կարգով՝ անկախ ձեռք բերված և (կամ) ներմուծված ապրանքները, ընդունված աշխատանքները և (կամ) ստացված ծառայությունները ԱԱՀ-ից ազատված գործարքներին վերագրվելու հանգամանքից»։ Տվյալ դեպքում, այդ սուբսիդիայի գումարը հարկման բազայում չներառելու, իսկ վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարից այդ հաշվանցումը (պակասեցումը) կատարելու հիմնավորվածությունը հնարավոր է պարզել լիազոր մարմնի կողմից համապատասխան ստուգում կատարելու միջոցով։

Մեքսիկայի բացառություն

2019թ-ին ընդամենը ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ն կազմել է 365,927,825 ՀՀ դրամ,որից վճարվել է 360,459,477.00 ՀՀ դրամ, քանի որ 31.01.2019թ-ի դրությամբ կազմակերպությունը ունեցել է ԱԱՀ դեբետային մնացորդ 6 089 364 ՀՀ դրամ իր միասնական հաշվում։ Կից ներկայացնում ենք հարկ վճարողի անձնական հաշվի քաղվածքը 31.01.2019թ-ի դրությամբ։ Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 61 հոդված կետ 1-ի <<Ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման գործարքների դեպքում, եթե Օրենսգրքի 62-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ, ապա ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում դրանց արժեքը՝ դրամական արտահայտությամբ՝ առանց ԱԱՀ-ի>>, 62 հոդված կետ 16-ի՝ << Պետության կամ լիազոր մարմնի սահմանած սակագներով ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործարքների համար ԱԱՀ-ով հարկման բազա է

համարվում համապատասխան սակագնի (առանց ԱԱՀ-ի) և դրա կիրառության հետ կապված՝ պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիայի (առանց ԱԱՀ-ի) հանրագումարը>> 2019թ-ին ԱԱՀ հարկման բազան կազմել է 3,496,781,081 ՀՀ դրամ, ՀՀ պետական բյուջե ԱԱՀ վճարման պարտավորությունը (առանց պակասեցումների) կազմել է 699,277,827 ՀՀ դրամ: 2019թ-ին ԱԱՀ-ի դեբետային մնացորդը պակասեցումներից հետո կազմել է 333 350 002 ՀՀ դրամ:

2020թ-ին ընդամենը ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ն կազմել է 363,587,061 ՀՀ դրամ,որից վճարվել է 356,186,492.00 ՀՀ դրամ, քանի որ 18.09.2020թ-ին, որպես շահութահարկի կանխավճար 2020թ-ի 3-րդ եռամսյակի համար վճարվել է պետական բյուջե 20,380,277.00 ՀՀ դրամ,որը կազմում էր նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի 20 տոկոսը : Սակայն համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի հոդված 135 կետ 1-ի հարկային մարմինը շահութահարկի կանխավճարը հաշվարկվել է նախորդ եռամսյակի ընթացքում ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների երկու տոկոսի չափով,քանի որ այն ավելի փոքր էր նախորդ հարկային տարվա վճարված շահութահարկի 20 տոկոսից : Առաջացել է միասնական հաշվում 10 163 091 ՀՀ դրամ առկա գումար, որից կատարվել են հաշվանցումներ: Կից ներկայացնում ենք հարկ վճարողի անձնական հաշվի քաղվածքը 01.10.2020թ-ի դրությամբ:

2020թ-ին ԱԱՀ հարկման բազան կազմել է 2,762,514,264 ՀՀ դրամ, ՀՀ պետական բյուջե ԱԱՀ վճարման պարտավորությունը (առանց պակասեցումների) կազմել է 552,543,251.2 ՀՀ դրամ: 2020թ-ին ԱԱՀ-ի դեբետային մնացորդը պակասեցումներից հետո կազմել է 188,956,185 ՀՀ դրամ:

Այսպիսով, 2020թ-ին ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ն կազմել է 363,587,061 ՀՀ դրամ, վճարվել է 356,186,492.00 ՀՀ դրամ,տարբերությունը մարվել է միասնական հաշվում առկա գումարից:

2019թ-ին ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ն կազմել է 365,927,825 ՀՀ դրամ, վճարվել է 360,459,477.00 ՀՀ դրամ: Տարբերությունը հաշվանցվել է 31.01.2019թ-ին ԱԱՀ դեբետային մնացորդից՝ 6089364 ՀՀ դրամ:

<<Ազազու>> ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղը իրականացնում է Մեթրոպոլիտենի դրենաժային թունելի կառուցումը: Այդ կազմակերպությունը Մեթրոպոլիտենին իր կատարած աշխատանքների դիմաց դուրս է գրում հարկային հաշիվ: <<Ազազու>> ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի գործունեությունը չունի արտոնյալ որակավորում համաձայն ՀՀ Կառավարության N910-Ն 27 հուլիսի 2017թ-ի որոշման, Հավելված 3՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐԻ, ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ՝ ՈՐՊԵՍ ԱՐՏՈՆՅԱԼ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ, ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՄ ԿԱՍԵՑՄԱՆ, կետ 3-ի

«Սույն կարգի պահանջները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի շրջանակներում տեղաբաշխվող սուբսիդիաների, սուբվենցիաների ու դրամաշնորհային ծրագրերի վրա, որոնց մասով ավելացված արժեքի հարկի գումարները նախատեսվում են համապատասխան տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով»:

«Ազազու» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի մատուցած ծառայությունների դիմաց առաջացած ԱԱՀ-ն վճարվում է պետական բյուջեից:

Համաձայն «Երևանի Մեթրոպոլիտենի վերակառուցում» ծրագրի ֆինանսավորման մասին Ենթավարկային պայմանագրերի, որոնք կնքվել են ՀՀ կառավարության և «Կարեն Դեմիրճյանի մեթրոպոլիտեն» ՓԲԸ-ի միջև, Հոդված 2, կետ 2.1-ի՝ որպես սույն պայմանագրի պայմանների առարկա Վարկատուն նախաձեռնում է ենթավարկավորել Ծրագիրն իրականացնողին ՎՋԵԲ-ի և ԵՆԲ-ի վարկերի 100% գումարի չափով, ինչպես նաև հարկերի վճարման համար պետական բյուջեից տրվող համաֆինանսավորված գումարի չափով:

Եթե ծրագիրը լիներ ԱԱՀ-ից ազատված ապա Մեթրոպոլիտենը «Ազազու» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղին պետք է ներկայացներ Կառավարության

կողմից տեղեկանք երեք օրինակից, որի վրա կնշվեր Կառավարության որոշման համարը, ամիսը և ամսաթիվը:

2019 և 2020 թվականներին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց Մետրոպոլիտենը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ վճարել է համապատասխանաբար՝ 579,058.9 հազ. դրամ և 509,883.3 հազ. դրամ: 2020 թվականին էլեկտրական էներգիայի ծախսի կրճատումը պայմանավորված է ապրիլ և մայիս (մասնակի) ամիսներին COVID-19 համաճարագի կանխման միջոցառումների շրջանակում Մետրոպոլիտենի գործունեության դադարեցումով: Ստուգմամբ պարզվել է, որ ծախսված էլեկտրական էներգիայի դիմաց վճարումները կատարվել են համաձայն հաշվիչների ցուցմունքների և դրանց հիման վրա «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ կողմից դուրս գրված հարկային հաշիվների:

2019 և 2020 թվականներին մաքրման ծառայությունների համար Մետրոպոլիտենի ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 145,494.0 հազ. դրամ և 128,696.5 հազ. դրամ:

Մետրոպոլիտենը իր կարիքների համար 2019 թվականի առաջին կիսամյակում մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով իրականացրել է գնման ընթացակարգ, որի արդյունքում «Քլինլայն» ՍՊԸ հետ կնքել է 09.01.2019թ. թիվ ԵՄ-ԳՀԾՁԲ-19/1 պայմանագիր՝ 67,500.0 հազ. դրամ արժեքով: Համաձայն գնման ընթացակարգի արձանագրության՝ ծառայության նախահաշվային գինը կազմել է 11,250.0 հազ. դրամ: Գնման ընթացակարգին մասնակցել են «ԷՍ ԷՍ ՍԻ» ՍՊԸ և «Քլինլայն» ՍՊԸ, որոնց գնային առաջարկները, ներառյալ ԱԱՀ, կազմել են համապատասխանաբար՝ 10,536.0 հազ. դրամ և 67,500.0 հազ. դրամ (2019 թվականի առաջին կիսամյակի համար), կամ ամսական՝ 11,250.0 հազ. դրամ: Գնահատող հանձնաժողովի 14.12.2018թ. որոշմամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԷՍ ԷՍ ՍԻ» ՍՊԸ, որը սակայն, սահմանված ժամկետում չի ներկայացրել հայտով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: Մետրոպոլիտենի 24.12.2018թ. գրության հիման վրա ՀՀ

Ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի արդյունքում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 17.01.2019թ. որոշմամբ «ԷՍ ԷՍ ՍԻ» ՍՊԸ ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Գնահատող հանձնաժողովը հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Քլինլայն» ՍՊԸ ճանաչել է հաղթող մասնակից և կնքել է պայմանագիր:

«Քլինլայն» ՍՊԸ հետ կնքած պայմանագրի գնման ժամանակացույցով ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019 թվականի հունիսի 30-ը: Սակայն, պայմանագրի 7.1.1 կետի համաձայն՝ հիմք ընդունելով, որ ծառայությունները փաստացի մատուցվել են 2019 թվականի հունվարի 1-ից սկսած, պայմանագրի դրույթները տարածվել են կողմերի միջև 2019 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա: Փաստորեն, պատշաճ չի հիմնավորվում մինչև պայմանագիր կնքելը առանց պայմանագրային պատրտավորություններ ունենալու «Քլինլայն» ՍՊԸ կողմից ինն օրվա մաքրման ծառայությունների մատուցումը:

Ստուգմամբ պարզվել է, որ Մետրոպոլիտենի պատասխանատու ստորաբաժանումը, պատշաճ չի իրականացրել նախնական հսկողությունը և պայմանագրի կառավարումը, քանի որ տեխնիկական բնութագրով սահմանված չեն ծառայության առանձին տեսակների համար միավորի գները, իսկ կատարողական ակտերով չեն ներկայացվել հաշվետու ժամանակահատվածում մատուցված մաքրման ծառայության ծավալները ըստ կատարման պարբերականության: Բացի այդ, բացակայում են պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի գրավոր դրական եզրակացությունները, հետևաբար պայմանագրի կատարման արդյունքի հանձնման ընդունման արձանագրությունները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 109-րդ կետի պահանջին՝ արձանագրություն

ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն կատարվել են ըստ ժամանակացույցի, որով նախատեսվել է հատկացման հավասարաչափ բաշխում ամսական կտրվածքով:

2019 թվականի երկրորդ կիսամյակի համար մաքրման ծառայության գնման նպատակով Մետրոպոլիտենի կողմից իրականացվել է նոր ընթացակարգ, որի արդյունքում Մետրոպոլիտենի և «Քլինլայն» ՍՊԸ միջև կնքվել է մաքրման ծառայության գնման 24.05.2019թ. թիվ ԵՄ-ԳՀԾՁԲ-19/2 պայմանագիր՝ 67,194.0 հազ. դրամ արժեքով: Գնման համար, առանց գնահաշվարկի, նախահաշվային արժեք էր սահմանվել «Քլինլայն» ՍՊԸ նախորդ ընթացակարգի գնային առաջարկը՝ 67,500.0 հազ. դրամ, որի դիմաց գնման ընթացակարգի միակ մասնակիցը՝ «Քլինլայն» ՍՊԸ ներկայացրել է 67,194.0 հազ. դրամ գնային առաջարկ: Ստուգմամբ պարզվել է, որ պայմանագրի կատարման նկատմամբ Մետրոպոլիտենի պատասխանատու ստորաբաժանումը ևս չի իրականացրել նախնական հսկողություն և պայմանագրի պատշաճ կառավարում, քանի որ պայմանագրի տեխնիկական բնութագրով չեն սահմանվել ծառայության առանձին տեսակների համար միավորի գները, կատարողական ակտերով չի ներկայացվել հաշվետու ժամանակահատվածում մատուցված մաքրման ծառայության ծավալները ըստ կատարման պարբերականության:

2020 թվականի համար Մետրոպոլիտենի մաքրման ծառայությունների գնման նպատակով իրականացված ընթացակարգի արդյունքում Մետրոպոլիտենի և «Քլինլայն» ՍՊԸ միջև կնքվել է 25.12.2019թ. թիվ ԵՄ-ԲՄԾՁԲ-20/1 պայմանագիրը՝ 134,292.0 հազ. դրամ արժեքով: Գնման նախահաշվային արժեքը նախատեսվել է 134,400.0 հազ. դրամ առանց գնահաշվարկի: Պայմանագրի կատարման նկատմամբ Մետրոպոլիտենի պատասխանատու ստորաբաժանումը նույնպես չի իրականացրել նախնական հսկողություն և պայմանագրի պատշաճ կառավարում: Պայմանագրի տեխնիկական բնութագրով չեն սահմանվել ծառայության առանձին

տեսակների համար միավորի գները, կատարողական ակտերով չի ներկայացվել հաշվետու ժամանակահատվածում մատուցված ծառայության ծավալը ըստ կատարման պարբերականության: Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվել են ժամանակացույցով, որով նախատեսվել է հատկացման հավասարաչափ բաշխում ամսական կտրվածքով:

Մետրոպոլիտենի բացառություն

Արձանագրության «Մետրոպոլիտենի ծախսեր» բաժնի՝ Ընկերության կարիքների համար մաքրման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի մասով հայտնում ենք, որ համաձայն «ՏԲ» պետ՝ Ա. Ղուկասյանի բացառության՝ 2014 թ-ից մետրոպոլիտենի մաքրման ծառայությունները պարզաճ կազմակերպելու նպատակով հայտարարվել է մրցույթ: Ընդհանուր ծառայության և ծառայության առանձին տեսակների միավորի գները հաշվարկելու համար որևէ նորմատիվ փաստաթղթեր չեն եղել, ինչի հետևանքով մրցույթ հայտարարելիս կողմնորոշիչ գին ունենալու համար հիմք է ընդունվել հաստիքային հավաքարարներին տրվող ամսական աշխատավարձերի և ծախսվող նյութերի հանրագումարը:

Յուրաքանչյուր ամսվա ավարտին բոլոր ստորաբաժանումների պատասխանատուները տալիս են դրական եզրակացություններ ծառայությունների պարզաճ կատարման համար (ստորագրում են հանձման-ընդունման ակտ), որն էլ հիմք է հանդիսանում նախատեսված գումարները կատարողին վճարելու համար:

Ստուգում է կատարվել 2019 և 2020 թվականներին Մետրոպոլիտենի գրունտային ջրերի ջրահեռացման համար կատարված ծախսերի նկատմամբ, որը կազմել է համապատասխանաբար՝ 53,705.4 հազ. դրամ և 36,063.3 հազ. դրամ:

2019 և 2020 թվականներին Մետրոպոլիտենի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ միջև ջրահեռացման ծառայությունների մատուցման համար գործել է 06.03.2017թ. թիվ ՄՊ-2/ԷՄ-2017 պայմանագիրը: Պայմանագրով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ պարտավորվել է իր ջրահեռացման համակարգի միջոցով հեռացնել Մետրոպոլիտենի կողմից ջրահեռացման համակարգ արտամղված գրունտային (ստորգետնյա) ջրերը:

Պայմանագրով նախատեսվել է, որ գրունտային ջրերի հեռացման ծավալը հաշվարկվում է պայմանագրի հավելվածում բերված համապատասխան քանակներով, իսկ ջրաչափեր տեղադրված լինելու դեպքում՝ դրանց ցուցմունքներին համապատասխան: Պայմանագրով նախատեսված հավելվածը չի կազմվել, փոխարենը առկա է 06.03.2017թ. երկկողմ ակտ, ըստ որի Մետրոպոլիտենի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ համատեղ աշխատանքային խումբը շրջայց է կատարել Մետրոպոլիտենի օբյեկտներ, որոնցում տեղակայված պարբերական ռեժիմով աշխատող պոմպերի միջոցով իրականացվում է գրունտային ջրերի արտամղումը դեպի ջրահեռացման համակարգ: Աշխատանքային խումբը կատարել է պոմպերի աշխատանքային ցիկլների ժամային չափագրումներ և արտամղված գրունտային ջրերի փաստացի ծավալների չափումներ հոսքաչափ սարքով: Շրջայցի արդյունքում հաշվարկվել է արտամղվող գրունտային ջրերի օրական ծավալը՝ 13239 մ³:

2019 թվականին, ինչպես նաև դրան նախորդող երկու տարիներին, հիմք ընդունելով արտամղվող գրունտային ջրերի օրական ծավալի այդ չափը, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ յուրաքանչյուր ամիս ներկայացրել է հարկային հաշիվ, որով Մետրոպոլիտենը կատարել է համապատասխան վճարումները:

2020 թվականի հունվարի 22-ին ձևավորվել է ևս մեկ համատեղ աշխատանքային խումբ, որը նույն կարգով հաշվարկել է արտամղվող գրունտային ջրերի օրական ծավալը: Ըստ կազմված այդ երկկողմ ակտի՝ արտամղվող գրունտային ջրերի օրական ծավալը պակասել է շուրջ 36 %-ով և կազմել է 8524.64 մ³: Սկսած 2020 թվականի հունվար ամսից պայմանագրի շրջանակում վճարումները կատարվել են այդ հաշվարկով, և Մետրոպոլիտենի ջրահեռացման ծախսը 2019 թվականի նկատմամբ պակասել է 17,642.1 հազ. դրամով: Ստուգման ընթացքում, 2019 և 2020 թվականների ջրահեռացման ծախսերի հիմնավորվածությունը պարզելու նպատակով, Մետրոպոլիտենի կողմից տեղադրված հաշվիչով կատարվել և ներկայացվել է գրունտային ջրերի արտամղման համար աշխատող հորիզոնական և խորքային պոմպերի 2021 թվականի հոկտեմբեր ամսին ծախսած էլեկտրական էներգիայի համեմատական

հաշվարկ: Ըստ հաշվարկի, պոմպերի ծախսած էլեկտրական էներգիան ոչ էական շեղումներով համապատասխանում է 2020 թվականի հունվարի 22-ին Մետրոպոլիտենի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ միջև երկկողմ ակտով արձանագրված այդ պոմպերի աշխատանքային օրական ռեժիմին, սակայն էական պակաս է 2017 թվականի ակտով արձանագրված պոմպերի աշխատանքային օրական ռեժիմից: 2018 և 2019 թվականներին պոմպերի աշխատանքային ցիկլերի չափագրումներ չեն կատարվել, և փաստացի ջրահեռացման համար վճարումները կատարվել են 2017 թվականի մարտ ամսին կազմած ակտի հիման վրա, և հետևաբար, հնարավոր չէ պարզել այդ տարիներին Մետրոպոլիտենի կողմից կատարված ջրահեռացման ծախսերի հիմնավորվածությունը:

Մետրոպոլիտենի բացառություն

Արձանագրության «Մետրոպոլիտենի ծախսեր» բաժնի՝ գրունտային ջրերի ջրահեռացման համար կատարված ծախսերի մասով հայտնում ենք, որ համաձայն «ԷՄ» մասնաճյուղի պետ՝ Ս.Մնացականյանի պարզաբանման 2019 և 2020 թ-րին մետրոպոլիտենի գրունտային ջրերի ջրահեռացման համար կատարված ծախսերը կազմել է համապատասխանաբար 53705,4 հազ. դրամ (13239 մ3/օր ծավալով) և 36063,3 հազ. դրամ (8524 մ3/օր ծավալով):

Արտամղվող ջրերի ծավալը մշտապես գտնվում է մասնաճյուղի կողմից մշտադիտարկման մեջ և եթե նկատվում է քանակական փոփոխություններ, ապա անմիջապես հրավիրվում է հանձնաժողով և իրականացվում է արտամղվող ջրերի ծավալի չափագրում:

Իսկ ջրաչափերը տեղակայված չեն, որովհետև յուրաքանչյուր հիմնական դրենաժային վերամղման պոմպակայանում (այսուհետև ՀԴՎ) կա 4 $d=150$ մմ տրամագծի ուղղահայաց խողովակներ, որոնց միջոցով պոմպերից մղված ջրերը բարձրանում են վերգետնյա դիտահորեր և ուղղվում դեպի քաղաքային ջրհորդանային ցանց:

Դրանց վրա ջրաչափեր չի տեղադրված, որպեսզի հավելյալ խոչնդոտներ առաջանա և մղվող ջրերը հեշտությամբ արտամղվեն և պոմպերի վրա չառաջանա լրացուցիչ ծանրաբեռնվածություն:

Բացի այդ յուրաքանչյուր ՀԴՎ-ում տեղակայված են 7-8 պոմպ և տեխնիկապես հնարավոր չէ յուրաքանչյուրի համար տեղադրել ջրաչափ: Որպեսզի բացառվի պոմպերի շուրջ շարքից դուրս գալը, նրանց վրա հավելյալ ծանրաբեռնվածությունը և մղման գործընթացը ավելի հեշտացվի, ջրաչափեր չի տեղադրվել: Այդ իսկ պատճառով մեր դիտարկումներից ելնելով կազմակերպվում է աշխատանքային խումբ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի և մետրոպոլիտենի աշխատակիցներից և իրականացվում է չափագրում և համապատասխան ակտով ֆիքսվում է արտամղվող ջրերի ծավալը:

2013թ-ի 09.08. 16954 մ3/օր ծավալ, 2017թ. 06.03. 13239 մ3/օր ծավալ, իսկ 2020թ. 22.01 կազմել է 8524 մ3/օր ծավալի ջուր:

Ստուգմամբ պարզվել է, որ ապրանքների գնման համար Մետրոպոլիտենի կողմից կնքված առանձին պայմանագրերով ապրանքները մատակարարվել են գնման ժամանակացույցի ուշացումներով, որի համար Մետրոպոլիտենը չի հաշվարկել և չի գանձել ուշացված օրերի տույժեր.

- «Վարբադ» ՍՊԸ հետ մետրոյի վագոնի 20 անվանում պահեստամասերի գնման համար 32,085.6 հազ. դրամի կնքված 02.09.2019թ. թիվ ԵՄ-ԳՀԱՊՁԲ 19/33-4 պայմանագրի գնման ժամանակացույցով ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել երրորդ եռամսյակը, որը 24.09.2019թ. կնքված թիվ 1 համաձայնագրով երկարացվել է 30 օրացուցային օրով: Փաստացի 20,958.7 հազ. դրամի ապրանքներ մատակարարվել են համաձայնագրով սահմանված ժամկետից 11 օր ուշացումով, իսկ 7,118.8 հազ. դրամի ապրանքներ՝ 14 օր ուշացումով: Պայմանագրի 6.2 կետով սահմանվել է, որ ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ չմատակարարված ապրանքի գնի 0.05 տոկոսի չափով:

Փաստորեն, Մետրոպոլիտենի կողմից ենթակա էր հաշվարկել և գանձել տույժ՝ գումարային 165.1 հազ. դրամ:

- «Ռեֆորս Գրուպ» ՍՊԸ հետ մետրոյի վագոնի 7 անվանում պահեստամասերի գնման համար 20,402.7 հազ. դրամի կնքված 02.09.2019թ. թիվ ԵՄ-ԳՀԱՊՁԲ 19/33-3 պայմանագրի գնման ժամանակացույցով ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել երրորդ եռամսյակը, որը 25.09.2019թ. կնքված թիվ 1 համաձայնագրով երկարացվել է 30 օրացուցային օրով: Փաստացի 17,533.7 հազ. դրամի ապրանքներ մատակարարվել են համաձայնագրով սահմանված ժամկետից 14 օր ուշացումով: Պայմանագրի 6.2 կետով սահմանվել է, որ ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ չմատակարարված ապրանքի գնի 0.05 տոկոսի չափով: Փաստորեն, Մետրոպոլիտենի կողմից ենթակա էր հաշվարկել և գանձել 122.7 հազ. դրամ տույժ:

Մետրոպոլիտենի կողմից վագոնների պահեստամասերի գնման համար կնքված պայմանագրերի տեխնիկական բնութագրերով սահմանվել է, որ պարտադիր պայման է հանդիսանում ապրանքի որակի սերտիֆիկատի առկայությունը: Ստուգմամբ պարզվել է, որ առանձին պայմանագրերով ապրանքները մատակարարվել են առանց որակի սերտիֆիկատների.

- «Ալերտո» ՍՊԸ հետ 20 հատ վագոնների կենտրոնական մեղմիչի գնման համար 9,840.0 հազ. դրամի կնքված 08.06.2020թ. թիվ ԵՄ-ԳՀԱՊՁԲ 20/29-10 պայմանագիր:
- «Նովա Թրեյդ» ՍՊԸ հետ 4 հատ ղեկավարման բլոկի գնման համար 6,300.0 հազ. դրամի կնքված 01.07.2020թ. թիվ ԵՄ-ԳՀԱՊՁԲ 20/28-13 պայմանագիր:
- «ՏՆՄ» ՍՊԸ հետ 15 հատ հովացուցիչի և 2 հատ էլեկտրական սնուցման աղբյուրի գնման համար 9,996.0 հազ. դրամի կնքված 30.06.2020թ. թիվ ԵՄ-ԳՀԱՊՁԲ 20/28-8 պայմանագիր:
- «Վարբադ» ՍՊԸ հետ վագոնի պահեստամասերի (կարդանային օղակագոտու մանեկ, ռեդուկտորի իրան, արգելակման կախոց միջին) գնման

համար 8,748.0 հազ. դրամի կնքված 24.07.2020թ. թիվ ԵՄ-ԳՀԱՊՁԲ 20/40-1 պայմանագիր:

Մետրոպոլիտենին տրամադրվող սուբսիդիա

ՀՀ պետական բյուջեի «Քաղաքային զարգացում» ծրագրի «Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում» միջոցառման կատարման համար ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը 2019 և 2020 թվականներին «սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է համապատասխանաբար՝ 2,732,776.8 հազ. դրամ և 2,801,071.0 հազ. դրամ: Երևանի քաղաքապետարանի 2019 և 2020 թվականների բյուջեներում, որպես Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման պատվիրակված լիազորությունների կատարման ծախսեր նախատեսվել է համապատասխանաբար՝ 2,742,686.4 հազ. դրամ և 2,754,929.2 հազ. դրամ:

2019 թվականի հունվարի 15-ին Երևանի քաղաքապետարանի և Մետրոպոլիտենի միջև կնքվել է սուբսիդիայի հատկացման պայմանագիր՝ 2,732,776.8 հազ. դրամի: Ըստ կնքված պայմանագրի՝ հատկացված գումարից 1,933,279.6 հազ. դրամը ուղղվել է Մետրոպոլիտենի գործառնական գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի ծածկմանը, իսկ 799,497.2 հազ. դրամը՝ վարկային ծրագրերով ենթավարկային պայմանագրերով Մետրոպոլիտենին նախատեսված վարկերի գծով առաջացած պարտավորությունների իրականացմանը: 2020 թվականին կնքված սուբսիդիայի հատկացման պայմանագրով Մետրոպոլիտենին տրամադրված է 2,801,071.0 հազ. դրամից 2,001,691.6 հազ. դրամը ուղղվել է ֆինանսական ճեղքվածքի ծածկման նպատակով, 799,379.4 հազ. դրամը՝ վարկերի գծով առաջացած պարտավորությունների իրականացման համար:

ՀՀ կառավարության 24.12.2003թ. թիվ 1937-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը (այսուհետ՝ Կարգ): Կարգի 3-րդ կետի համաձայն՝ սուբսիդիան պետության հանձնարարությամբ և որոշած գնով կազմակերպության կողմից որպես նվազագույն շահավետ գնից ցածր գնով ապրանքների արտադրության, արտահանման, ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման արդյունքում այդ կազմակերպության կրած վնասի կամ դրա մի մասի փոխհատուցումն է: Կարգի 5-րդ կետի համաձայն՝ նվազագույն շահավետ գինը տնտեսապես հիմնավորված այն նվազագույն գինն է, որով պետության գնային կարգավորման բացակայության դեպքում կազմակերպության կողմից կարտադրվեր, կարտահանվեր կամ կներմուծվեր տվյալ ապրանքը, կկատարվեր տվյալ աշխատանքը կամ կմատուցվեր տվյալ ծառայությունը:

Միաժամանակ, Կարգի 8-րդ կետով սահմանվել են սուբսիդիայի տրամադրման մասին պայմանագրին ներկայացվող պահանջները: Սահմանվել է, որ պայմանագրում նշվում են՝

- ա) բյուջետային ծախսերի գործառական դասակարգման այն ծրագրի անվանումը և համառոտ բովանդակությունը, որի շրջանակներում տրամադրվում է սուբսիդիան.
- բ) պայմանագրի շրջանակներում արտադրվող, ներմուծվող կամ արտահանվող ապրանքների, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների նկարագիրը՝ արտահայտված տվյալ ոլորտում պետական քաղաքականություն իրականացնող պետական կառավարման մարմնի կողմից սահմանված համապատասխան ցուցանիշներով (քանակական և ժամկետայնության).
- գ) արտադրվող, ներմուծվող կամ արտահանվող ապրանքի, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության մեկ միավորի սահմանված գինը.
- դ) պայմանագրի շրջանակներում արտադրման, ներմուծման կամ արտահանման ենթակա ապրանքների, կատարման ենթակա աշխատանքների, մատուցման

ենթակա ծառայությունների առավելագույն քանակը և դրա փոփոխման պայմանները.

ե) արտադրվող, ներմուծվող կամ արտահանվող ապրանքի, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության նվազագույն շահավետ գինը.

զ) տրամադրվող սուբսիդիայի առավելագույն չափը.

է) պայմանագրով սահմանված պայմանների չկատարման համար կողմերի պատասխանատվությունը.

ը) այլ դրույթներ, որոնք պայմանագրի կողմերը կգտնեն նպատակահարմար:

Ստուգմամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետարանի և Մետրոպոլիտենի միջև 2019 և 2020 թվականներին սուբսիդիայի հատկացման պայմանագրերը կնքվել են Կարգի պահանջներին անհամապատասխան՝ չի նշվել մատուցվող ծառայության մեկ միավորի սահմանված գինը, մատուցման ենթակա ծառայությունների առավելագույն քանակը և դրա փոփոխման պայմանները, մատուցվող ծառայության նվազագույն շահավետ գինը:

2019 և 2020 թվականներին կնքված սուբսիդիայի հատկացման պայմանագրերի 2.4 կետով սահմանվել է, որ հատկացվող սուբսիդիայի գծով եկամտի և դրա հաշվին կատարվող ծախսերի գծով իրականացվում է առանձնացված հաշվառում, իսկ դրամական միջոցները չօգտագործելու կամ խնայողությունների դեպքում պայմանագրի ավարտից հետո եռօրյա ժամկետում չօգտագործված կամ խնայված գումարները վերադարձվում են պատվիրատուին՝ Երևանի քաղաքապետարանին: Պայմանագրերի 4.1 կետով սահմանվել է, որ պայմանագրի ավարտից ոչ ուշ քան 30 օրվա ընթացքում կատարողը՝ Մետրոպոլիտենը գրավոր պատվիրատուին՝ Երևանի քաղաքապետարանին, ներկայացնում է տրամադրված գումարների օգտագործման վերաբերյալ հաշվետվություն:

Ստուգմամբ պարզվել է, որ 2019 և 2020 թվականներին հատկացված սուբսիդիաների գծով Մետրոպոլիտենը առանձնացված հաշվառում չի իրականացրել և տրամադրված գումարների օգտագործման վերաբերյալ

հաշվետվություններ չի ներկայացրել: Առանձնացված հաշվառում չիրականացնելու պատճառով հնարավոր չէ որոշել Մետրոպոլիտենի գործառական գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի չափը, որին համարժեք պետք է տրամադրվեր սուբսիդիան, ինչպես նաև սուբսիդիայի գումարներից վերադարձման ենթակա չօգտագործված միջոցները: Փաստացի, 2019 թվականին Մետրոպոլիտենի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով առաջացել է շահույթ, որի դիմաց Մետրոպոլիտենը պետական բյուջե է վճարել 102,327.1 հազ. դրամ շահութահարկ, իսկ բանկային հաշիվներում Մետրոպոլիտենի դրամական միջոցների մնացորդները տարեվերջին գումարային կազմել են 474,812.3 հազ. դրամ:

2020 թվականին ուղևափոխադրումներից Մետրոպոլիտենի մուտքերը 2019 թվականի ցուցանիշի նկատմամբ նվազել են 876,709.8 հազ. դրամով, սակայն հատկացված սուբսիդիան նախորդ տարվա նկատմամբ ավելացել է ընդամենը 68,412.0 հազ. դրամով: 2020 թվականի տարեվերջին Մետրոպոլիտենի դրամական միջոցների մնացորդը բանկային հաշիվներում գումարային կազմել են 83,561.9 հազ. դրամ:

Փաստորեն, պետական բյուջեից Մետրոպոլիտենին որպես սուբսիդիա գումար հատկացնելը պայմանավորված չէ Մետրոպոլիտենի գործունեության ֆինանսական ցուցանիշներով, չունի հաշվարկային հիմնավորում և չի համապատասխանում Կարգով սահմանված սուբսիդիայի հատկացման պահանջներին: Հետևաբար, յուրաքանչյուր տարի Մետրոպոլիտենին պետական բյուջեից հատկացվող գումարի չափը «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի» իմաստով չի համապատասխանում սուբսիդիայի հատկացման նպատակին, այն է՝ պետության հանձնարարությամբ և որոշված գնով կազմակերպության կողմից որպես նվազագույն շահավետ գնից ցածր գնով ծառայության մատուցման արդյունքում այդ կազմակերպության կրած վնասի կամ դրա մի մասի փոխհատուցում:

Մետրոպոլիտենի բացառություն

2022թ-ից «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում բացել է դրամային նոր հաշիվ հատկացվող սուբսիդիայի համար, որպեսզի կատարվի առանձնացված հաշվառում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևանի քաղաքապետարանին՝

– Մետրոպոլիտենին սուբսիդիայի հատկացման պայմանագիրը համապատասխանեցնել սուբսիդիաների հատկացման Կարգի պահանջներին և իրականացնել հսկողություն պայմանագրի պայմանների կատարման նկատմամբ:

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ՝

- սահմանել գովազդի և մալուխների ու համապատասխան սարքավորումների տեղադրման թույլտվության պայմանագրերի գնագոյացման համար հիմք հանդիսացող սակագները,
- վարձավճարների ուշացումների դեպքերում հաշվարկել և գանձել վարձակալության պայմանագրով նախատեսված տույժերը,
- պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունը իրականացնել օրենսդրության պահանջներին համապատասխան,
- ապրանքների մատակարարման ժամկետների ուշացումների դեպքերում ապահովել պայմանագրով նախատեսված տույժերի գանձումը,
- ջրահեռացման ծախսերը կատարել յուրաքանչյուր տարի արտամղվող գրունտային ջրերի ծավալների չափագրումների հիման վրա:

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացության վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվություն: